

ԱՐՏԱԿ ՏՈՆԻԿՅԱՆ

ԴԱՆԻԵԼ ՂԱՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՋԱՆՄԲԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԿ ՏՈՆԻԿՅԱՆ

ԴԱՆԻԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ, 1977

78 АР 2
Ղ 15 Տ

Սույն գրքում շարադրված են Դանիել Ղազարյանի կյանքն ու մանկավարժական, երաժշտական-հասարակական, ստեղծագործական, խմբավարական գործունեությունը, նրա դերը մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության գործում:

© Հայաստանի երգչախմբային ընկերություն

Հայ երաժշտական մշակույթի անվանի գործիչներ Կարա-Մուրզան, Մ. Եկմալյանը, Կոմիտասը իրենց բեղմնավոր գործունեությամբ փայլուն օրինակ ծառայեցին ժամանակի սկսնակ հայ կոմպոզիտորներին, որոնք ընդօրինակելով և շարունակելով մեծ վարպետների ավանդները, ծավալեցին ստեղծագործական, մանկավարժական, խմբավարական շնորհակալ աշխատանք։

Արմեն Տիգրանյան, Ռոմանոս Մելիքյան, Գրիգոր Սյունի, Սպիրիդոն Մելիքյան, Ազատ Մանուկյան, Անտոն Մայիլյան, Ստեփան Դեմուրյան և շատ ուրիշներ։ Ահա անուններ, որոնցից ամեն մեկն իր հնարավորության սահմաններում մեծ ծառայություն է մատուցել հայ երաժշտական մշակույթի զարգացմանը։ Նրանցից ոչ մեկը չի եղել լոկ ստեղծագործող։ Դեռևս ուսանողական տարիներից զբաղվել է մանկավարժությամբ, ժողովրդական երգերի հավաքագրմամբ, հայ երգի պրոպագանդայով, երաժշտական հասարակական աշխատանքով։

քը և իր ազդեցությունն ունեցել գյուղի հասարակական կյանքի վրա։

Նրա որդի Ղազարը շարունակել է հոր ժառանգությունը, աշխատել է բարձր պահել իր տոհմի պատիվը, դրա համար գյուղացիները նրան անվանել են «նամուսով Ղազար», այդ պատճառով էր, որ հայրս աշխատում էր պահպանել մեր ազգանունը նրա անունով՝ Ղազարենց-Ղազարյան։ Նրա որդի Դանիելը՝ իմ պապը, որը արհեստավոր էր՝ ոսկերիչ, իր ժամանակի հասկացողությամբ դաստիարակված, կուլտուրական մարդ էր։ Նա ձգտում էր դեպի քաղաք, դեպի կուլտուրական կյանք։ Եվ նա գյուղից քաղաք գնալիս կես ճանապարհին՝ Քոասնի գյուղի և մեր գյուղի միջև ընկած այսպես կոչված «Փերունց» աղբյուրի մոտ քնել է փափախը գլխի տակին և էլ չի արթնացել՝ մեռել է հանգիստ մահով։ Այդպես են նրան գտել համագյուղացիները[1]։

Դանիելի հայրը՝ Ավագը, եղել է գյուղական ուսուցիչ։ Սովորել է Շուշիի ծխական և թեմական դպրոցներում։ Միաժամանակ սովորում է դերձակություն և ներկարարություն։

Նա օժտված էր դուրեկան ձայնով, նուրբ լսողությամբ և անչափ սիրում էր երգն ու երաժշտությունը։ Լավ գիտեր հայկական ձայնագրությունը, որը սովորել էր Շուշու թեմական

1 Իր տղային՝ ժորալին գրած նամակից. 1/5-50։ Ձեռագիրը գտնվում է Դ. Ղազարյանի արխիվում։

դպրոցի երգ-երաժշտության և հայկական ձայնագրության ուսուցիչ Տեր-Գարեգին քահանա Հովհաննիսյանից[1]՝ Ե՛վ որպես լավ ձայն ունեցող, և՛ հայկական ձայնագրությանը տիրապետող, հաճախակի հանդես է եկել որպես դպիր։

Հայրը, տեսնելով տղայի երաժշտական ընդունակությունները, հրաշալի ձայնը, որոշում է նրան քահանա դարձնել, բայց մայրը սաստիկ ընդդիմանում է, որ իր միակ զավակը կրոնական դառնա։

Դանիելի մայրը՝ Մանուշակը, նույնպես ուներ լավ ձայն և նվագում էր հարմոնի վրա։ Նա իր պարզ ու անմիջական կատարմամբ մեծ բավականություն էր պատճառում ընտանիքի անդամներին։

Դանիելենց ընտանիքը բազմանդամ էր՝ հինգ տղա և երեք աղջիկ, որոնք բոլորն էլ ունեցել են լավ ձայն, երգել ու նվագել են։ Մեծ որդին՝ Սերգեյը, շատ էր սիրում թատրոն և հաճախակի կազմակերպում էր ներկայացումներ։

Քույրերից Անահիտը[2] նույնպես երաժշտության սեր ուներ և ստացել էր երաժշտական բարձրա-

---

1 Տեր-Գարեգին քահանա Հովհաննիսյանը իր երաժշտական կրթությունը, հատկապես հայկական ձայնագրության հետ ծանոթությունը, ստացել էր Էջմիածնում՝ Նիկողայոս Թաշճյանի մոտ, որը Գևորգ կաթողիկոսի հրավերով Կոստանդնուպոլսից եկել էր Էջմիածին՝ հոգևոր երաժշտության ձայնագրություններ կատարելու։

2 Անահիտ Ղազարյան, երգչուհի, երաժշտության դասատու Թբիլիսիի երաժշտական ուսումնարանում։

դույն կրթություն, փոքր եղբայրը՝ Վազարշակը[1], լավ թառ էր նվագում, ղեկավարում ժողգործիքների անսամբլներ և փողային նվագախմբեր։ Փոքր քույրը՝ Աշխենը[2], աչքի էր ընկնում իր երաժշտականությամբ, լավ ձայնով, մասնակցում երգեցիկ խմբերում։ Եղբայրը՝ Գրիգորը, զբաղվել է մանկավարժությամբ, բայց միաժամանակ սիրել երգն ու երաժշտությունը։

Գեղեցիկ գյուղաքաղաքին հարազատ ժողովրդական, գուսանական երգն ու երաժշտությունը, անվանի ժողովրդական երաժիշտների բարձրարվեստ կատարումները իրենց ազդեցությունն էին թողել երաժշտասեր ընտանիքի վրա։ Ահա այն միջավայրը, որտեղ իր առաջին երաժշտական տպավորություններն է ստանում ապագա կոմպոզիտորը։

Դանիելը իր խելացիությամբ և համեստ, ժիր, աշխատասեր բնավորությամբ շատ սիրված էր ընտանիքում։ Փոքր հասակից նա սիրեց երգն ու երաժշտությունը։ Յոթ տարեկան նվագում էր սրնգի վրա, մի քանի տարի անց՝ ջութակի վրա։ Մեծ եղբոր բացակայության ժամերին օգտվում էր նրա բարիտոնից, իսկ ավելի ուշ հաջողությամբ նվագում էր թառի վրա։

Հայրը, նկատելով տղայի երաժշտական ընդու-

---

1 Վազարշակ Ղազարյան, մանկավարժ, աշխատել է Թբիլիսիում, Լենինի և Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր։

2 Աշխեն Ղազարյան, մանկավարժ, աշխատել է Թբիլիսիում, Լենինի շքանշանակիր։

նակութիւնները, որոշում է նրան անպայման տալ Շուշու թեմական դպրոցը, քանի որ այնտեղ երգ-երաժշտութեան դասավանդումը պատշաճ բարձրութեան վրա էր, այնտեղ գործում էր երգեցիկ խումբ, որն իր ելոյթներով ինչպես պատրաստի արարողութեան, այնպես էլ զանազան հանդեսների ժամանակ գեղարվեստական մեծ հաճույք էր պատճառում ունկնդիրներին, կատարելով ժողովրդական և հայրենասիրական երգեր։ Դանիել Ղազարյանը թեմական դպրոցում նախ աշակերտում է Տեր-Կարապետին, որը նրան սովորեցնում էր կրոն, հոգևոր երգեր և շարականներ, ապա կոմպոզիտոր, խմբավար, շնորհալի մանկավարժ Ստեփան Դեմուրյանին, որը խոշոր դեր խաղաց դպրոցում երգ-երաժշտութեան դասավանդման գործը լավ հիմքերի վրա դնելու, միաժամանակ զբաղվելով հայ երգը պրոպագանդելու գործով։ Շատ շուտով նա դարձավ իր սաների սիրված ուսուցիչը։

Դ. Ղազարյանը Ստ. Դեմուրյանի մասին հետևյալն է գրում։ Նախ նկարագրելով նրա գրավիչ արտաքինը, շարունակում է. «Շատերը սիրեցին նրան ու նրա առարկան։ Եվ եթե թեմական դպրոցը տվեց բազմաթիվ գրագետ երաժշտասերներ, որոնք շնորհակալ գործունեություն ծավալեցին Ղարաբաղում և այլուր, ապա դրա համար նախ և առաջ պարտական ենք Ստեփան Դեմուրյանին»։

Շուշվա թեմական դպրոցում երաժշտությունը

որպես ավանդվող առարկա անցնում էին վեց տարի։ Առաջին երեք տարում սովորում էին միայն երգեցողություն, իսկ հիմնական դասարաններում երեք տարի անցնում էին ձայնագրություն և երգ։ Վեցերորդ դասարանում ձայնագրությունը իբրև ավանդվող առարկա վերջանում էր։ Վեցերորդ դասարանի աշակերտները կարողանում էին հայկական ձայնագրությամբ ազատ կարդալ և թելադրություն գրել։

Դպրոցում շատ շուտ բացահայտվում են Դանիելի երաժշտական ընդունակությունները, մանավանդ որ նա ուներ շատ լավ ձայն, մասնակցում էր երգեցիկ խմբի աշխատանքներին, երգում մեներգեր և հաճախ հանդես գալիս զանազան հանդեսներին։

Բազմավաստակ մանկավարժ Ս. Խորայելյանը, որը եղել է Դ. Ղազարյանի ընկերներից մեկը, իր հուշերում հետևյալն է գրում. «Դանիելը ինձ հետ երգում էր թեմական դպրոցի երգեցողության ուսուցիչ Ստեփան Դեմուրյանի ջանքերով կազմակերպված քառաձայն երգչախմբում։ Տոն օրերին խումբը երգում էր քաղաքի նշանավոր ճարտարապետական կոթող հանդիսացող Ղազանչեցոց եկեղեցում և դպրոցական հանդեսներին, իսկ սովորական կիրակիների պատարագներին ես և Դանիելը երգում էինք կանաչ ժամում, կատարելով նաև սոլոները։ Մեծ պասի օրերին Դանիելի հետ միասին սիրում էինք եկեղեցում երգել «Նայած սիրով» շարականը։ Մենք երկուսով

օժտված էինք ձայնական տվյալներով, այդ պատճառով մեզանից մեկը մասնակցում էր եկեղեցու աջ դասում երգող խմբին, իսկ մյուսը՝ ձախ դասում երգողներին։

Շատ հաճախ էր պատահում, որ Դանիելի հետ միասին երգում էինք դպրոցական հանդեսներին։ Այսօրվա պես հիշում եմ՝ մի անգամ «Վարդանանց տոնին» դպրոցում հանդես էր, Դանիելը երգեց Պեշիկթաշլյանի բանաստեղծության վրա հորինված երգի մեներգը՝ «Որ մահկանացուն», որը կատարում էր երգեցիկ խումբը»։

Դժբախտաբար ընտանեկան սուղ պայմանները խանգարեցին երիտասարդ Դանիելին շարունակելու կրթությունը և մասնավորապես երաժշտական կրթությունը։ Դ. Ղազարյանը ստիպված ընդհատում է ուսումը և զբաղվում կոշկակարությամբ, օգնում հորն ու մեծ եղբորը հոգալու բազմանդամ ընտանիքի ապրուստը։

Դ. Ղազարյանը աշխատանքի հետ միասին մեծ ուշադրությամբ հետևում է իր երիտասարդ ուսուցչի՝ Ստեփան Դեմուրյանի աշխատանքներին, մասնակցելով երգեցիկ խմբի փորձերին, մեներդում հանդեսներին, համերգներին, եկեղեցում, որոնք հետագայում նպաստեցին նրա մասնագիտական առաջադիմությանը։

Մոտ վեց տարվա արհեստավորի աշխատանքը, սիստեմատիկ երաժշտական կրթությունից կտրվելը, այնուամենայնիվ, չխանգարեցին երիտա-

սարդ Դանիելին շարունակելու զբաղվել իր սիրած արվեստով՝ երաժշտությամբ։

Դանիել Ղազարյանի գեղեցիկ ձայնը և կատարողական ընդունակությունները մեծ չափով նպաստել են նրան չկտրվելու քաղաքի երաժշտական կյանքից, շփվելու անվանի երաժիշտների հետ։ Նրա վրա մեծ տպավորություն են թողել Շուշիում կազմակերպված Կարա-Մուրզայի համերգները, հատկապես առաջին համերգը, որին ակտիվ մասնակցություն է ունեցել ինքը։ Ապա Գրիգոր Սյունիի համերգը, որը էջմիածնի Գևորգյան ճեմարանն ավարտելուց հետո գալիս է Շուշի՝ կազմակերպելու իր ստեղծագործությունների երեկոն։

Դանիել Ղազարյանի վրա հատկապես մեծ տպավորություն է թողել Կարա-Մուրզան իր պատկառելի արտաքինով և եռանդուն գործունեությամբ, որի «Լեպո լե լե», «Ջիմ վզին», «Գացեք տեսեք» և այլ ժողովրդական երգերը և նրանց կատարումը երկար ժամանակ մնացել են նրա հիշողության մեջ և փոթորկել նրա հոգին։

Բոլոր նրանք, երաժիշտներ թե երաժշտասերներ, որոնք առիթ են ունեցել առաջին անգամ հանդիպելու և ծանոթանալու Կարա-Մուրզայի հետ հատկապես համերգային շրջագայության ժամանակ, մասնակցել երգեցիկ խմբերում և կամ ունկնդրել, մեծ սիրով, համակրանքով և երախտագիտության խոր զգացումով են արտա-

հայտվում երգչախմբային արվեստի այդ վեհերանի մասին, որն իր գործունեությամբ անջնջելի տպավորություն է թողել երգչախմբի մասնակիցների վրա, որոնցից շատերը նրա մեկնելուց հետո շարունակել են ղեկավարել երգեցիկ խմբի ելույթները։

Ականատես լինելով Կարա-Մուրզայի, Գրիգոր Սյունիի, Ստեփան Դեմուրյանի հայրենանվեր գործունեությանը, երաժշտությամբ տարված Դանիել Ղազարյանը չէր կարող հանդիստ մնալ։ Մանավանդ ամառային ամիսներին Շուշի էին գալիս տարբեր տեղերում սովորող և կամ աշխատող ընկերները, որոնց հանդիպումները վեր էին ածվում հետաքրքիր գեղարվեստական երեկոների, երգում իրենց սիրած երգերը՝ «Մայր Արաքսի ափերով», «Լարի թմբա լալա լա», «Ջայն տուր, ով ծովակ», «Լռեց, ամպերը», «Օհ, ինչ անուշ» և շատ ժողովրդական երգեր, որոնց հանպատրաստի ելույթները մեծ բազմություն էին հավաքում[1]։

---

1. Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստ Ալեքսանդր Ալեքսանդրյանը պատմում է, որ այդ երիտասարդների շարքերում էր նաև Մոսկվայի կոնսերվատորիայի ուսանող Ն. Զիշի Բաղդասարյանը (հետագայում կոմպոզիտոր-խմբավար), որը ամառային ամիսներին՝ արձակուրդներին, գալով իր ծննդավայրը՝ Շուշի, կազմակերպում էր երգեցիկ խումբ, ժողովրդական գործիքների անսամբլ, մասնակցում զանազան երեկույթների և համերգների, մեծ հետաքրքրություն առաջացնելով հայրենակիցների շրջանում։ Մանավանդ որ ժողովրդական գործիքների անսամբլ Շուշիում կազմակերպվում էր առաջին անգամ։

Այս բոլորը խոսվում են Դանիելի հոգին, և նա վերջնականապես որոշում է հաղթահարել բոլոր տեսակի դժվարությունները, նվիրվել երաժշտությանը և մեկնել երաժշտական կրթություն ստանալու։ . . .

«Բարի նախանձը կրծում էր իմ հոգին, և ես դժվար ճանապարհներով, իմ սեփական ուժերով, ամենատանջալից միջոցներով ձգտել եմ դեպի վեր, դեպի գեղեցիկը, դեպի կուլտուրան։ Ջեմ վայելել դուրդուրանք, հովանավորություն, չեմ ժառանգել հարստություն, չեմ ստացել հարազատների կողմից անհրաժեշտ օժանդակություն, սակայն իմ ցանկությունների իրագործմանը հասնելու պատճառը եղել է իմ բարի սիրտը, իմ աննախանձ հոգին, ծով համբերությունը, իմ ժրաջան աշխատանքը և ամենաճիշտ մոտեցումը կյանքի այս կամ այն երևույթներին»[1]։

Վեց տարվա ընդհատված սիստեմատիկ կրթու-

Ըստ Ա. Ալեքսանդրյանի պատմածի Շուշիի քաղաքային այգում ամառային ամիսներին ելույթներ է ունեցել փողային նվագախումբ, որ տարբեր շրջաններում դեկավարել են բժիշկ Հովհաննես Հովհաննիսյանը (որը հետագայում բաբվում դեկավարում էր ժողովրդական գործիքների նվագախումբը), Նիկողայոս Թևմուրազյանը (հետագայում Հայկ. ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ) և ինքը՝ Ալեքսանդր Ալեքսանդրյանը։

Վաստակաշատ մանկավարժ Ս. Իսրայելյանը իր հուշերում հիշատակում է, որ երիտասարդական այդ հավաքույթներին մասնակցել է նաև հոլակավոր դերասան Հովհաննես Աբելյանը, որը ամառը եկել էր Շուշի ներկայացումներ տալու։

---

1 Իրէ տղային՝ ժորային գրած նամակից. 1/5-50։ Ջեռագիրը տե՛ս Դ. Ղազարյանի արխիվում։

թյունից հետո իր ուսուցիչ Ստեփան Դեմուրյանի, կոմպոզիտոր Գրիգոր Սյունիի և ուրիշների խորհրդով Դ. Ղազարյանը 1907 թ. մեկնում է Բաքու՝ երաժշտական դպրոցում սովորելու։

Իր դպրոցական ընկերների օգնությամբ նա մեկ տարի մնում է Բաքվում։ Երաժշտական դպրոցի ղեկավարությունը, լսելով Դանիելի ձայնը և ծանոթանալով նրա երաժշտական ընդունակություններին, սիրով ընդունում է նրան վոկալ բաժինը։ Ուսումնարանում սովորելուն զուգընթաց նա հաճախում է Բաքվի բանվորական գիշերային ինստիտուտի ռուսական և օտար լեզուների ֆակուլտետները և սովորում բարձր առաջադիմությամբ։ Իր անցածից և հիմնականում պրակտիկ փորձից ելնելով, Դ. Ղազարյանը կազմակերպում է բանվորական երգեցիկ խումբ, ելույթներ կազմակերպում Բաքվում, Բալախանիում, Բիբիէյբաթում, Սաբունչիում։

Ուսումնական տարեվերջին վերադառնալով Շուշի, ամառն անց է կացնում ծննդավայրում և իր ընկերների հետ մասնակցում կազմակերպվող ներկայացումներին ու երեկույթներին։

1908 թ. աշնանը Դ. Ղազարյանը տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ և սկսվում է նրա երաժշտական գործունեությունը։

Նախ ընդունվում է տեղի երաժշտական դպրոցը, ապա կոնսերվատորիայի վոկալ դասարանը՝ պրոֆ. Բրոչիի մոտ։ Մշակելով ձայնը, նա միաժամանակ հաճախում է տեսական դասըն-

թացներին։ Չորս տարի սովորելուց հետո Դ. Ղազարյանը անցնում է ստեղծագործական դասարանը, որտեղ աշակերտում է Զ. Պալիաշվիլուն, Ն. Նիկոլաևին, Ն. Չերեպնինին և Հարտմանին։

Դժվար էր այդ շրջանում առանց տնտեսական ապահովության նորմալ կրթություն ստանալը։ Եվ ահա, ինչպես ժամանակի երաժշտական ուսումնական հաստատությունների հայ ուսանողների մեծ մասը, Դ. Ղազարյանը ևս որոշում է, նյութական դրությունը մի փոքր բարելավելու նպատակով, անցնել աշխատանքի որպես երգերաժշտության ուսուցիչ։

«Այսօրվա պես հիշում եմ երեսուն տարի առաջ ինձ հետ կատարվածը,— գրում է Դ. Ղազարյանը։— Մեծ դժվարությամբ դասեր ստացա ծխական դպրոցում, որովհետև ուսուցիչների ընդունելության գործը կապված էր հոգաբարձուների քմահաճույքների հետ։ Այդ շրջանում մանավանդ երգեցողության դասատուները չէին գնահատվում։ Մանկավարժական ժողովներում ձայն չունեին։ Ստանում էին շատ չնչին վարձատրություն»[1]։

Ահա այդպիսի դժվարությամբ Դ. Ղազարյանն ընդունվում է Թիֆլիսի «Լույս» ընկերության տարրական դպրոցը, որպես երգ-երաժշտության դասատու։

Դժվար էր երաժշտության դասատուների վի-

1 «Սովետական Հայաստան» թերթ, 1/2, 49 թ., № 25, «Նոր հանդով»։

ճակը այդ շրջանում, չկար հաստատված ծրագիր, համապատասխան երաժշտական գրականություն, երգարաններ։ Դպրոցներում դասավանդում էին հոգևորականները, որոնք սովորեցնում էին հոգեվոր երգեր՝ եկեղեցական արարողություններին մասնակցելու համար, ինչպես նաև մի քանի ազգային-հայրենասիրական և ժողովրդական երգեր։ Երեխաները ձուրկ էին իրենց այնքան սիրելի և հասկանալի մանկական երգերից։

1905 թ. հեղափոխությունը նոր շարժման ազդակ հանդիսացավ։ «Մանուկին համապատասխան մանկական երգ» տեսակետը դավանող ու պաշտպանող մի խումբ առաջավոր մտավորականներ՝ գրողներ, կոմպոզիտորներ (Ղ. Աղայան, Հովհ. Թումանյան, Աթ. Խնկոյան, Հ. Աղաբաբ, Ռ. Մելիքյան, Ա. Մանուկյան, Ա. Մայիլյան, Միք. Միրզոյան, հետագայում Դ. Ղազարյան և ուրիշներ) ստեղծեցին մանկական երգերի մի շարք, որոնցից շատերը մինչև այսօր էլ պահպանում են իրենց արժեքը մեր մանկական երաժշտական գրականության անդաստանում։

1908 թ. Թիֆլիսում կոմպոզիտորներ Ազատ Մանուկյանի և Ռոմանոս Մելիքյանի նախաձեռնությամբ կազմակերպվում է «Երաժշտական լիգա» ընկերությունը, որի նպատակն էր օժանդակել երգ-երաժշտության դասավանդման դրվածքին, դպրոցականների համար ստեղծել նոր երգեր, գարկ տալ ժողովրդական և հայ կոմպո-

վիտորների երգերի ուսուցմանը, բարձր մակարդակի վրա դնել դպրոցականների գեղագիտական դաստիարակության գործը։

Պետք է նշել, որ «Երաժշտական լիգա»-ն, ընդգրկելով երիտասարդ կոմպոզիտորների, երգերաժշտության դասատուների (Ռ. Մելիքյան, Ա. Մանուկյան, Միք. Միրզոյան, Հակոբ Հովհաննիսյան, Դ. Ղազարյան և ուրիշներ), մեծ աշխատանք կատարեց այդ ուղղությամբ։ Դպրոցականների համար ստեղծվեցին նոր երգեր, երաժշտական պատկերներ, մանկական օպերաներ, որոնք մեծ հետաքրքրություն և թարմություն մտցրեցին դպրոցներում։ Հրատարակվեցին մանկական երգարաններ, դասագրքեր[1]։

Մանկական երգերի ստեղծման գործում իր առաջին փորձերն է արել Դ. Ղազարյանը, որոնք մեծ ընդունելություն են գտել երեխաների մոտ։

Թիֆլիսում երկու տարի աշխատելուց հետո Դ. Ղազարյանը հրավիրվում է Կաղզվան, որպես տեղի հայկական դպրոցի երգ-երաժշտության դասատու։ Թիֆլիսում իր ընկերների շրջանում ձեռք բերած փորձը Դ. Ղազարյանը հաջողությամբ կիրառում է Կաղզվանում, որտեղ, բացի մանկավարժական, ստեղծագործական աշխատան-

---

1 Ա. Մանուկյանի «Փնջիկ» մանկական երգերի շարքը Ռ. Մելիքյանի խմբագրությամբ, Ռ. Մելիքյանի և Ա. Մանուկյանի «Երաժշտական այբբենարանը», Ս. Պ. Մելիքյանի կազմած «Երգեցողության դասագիրքը», երկու տետր և այլն։

քից, կազմակերպում է քառաձայն երգեցիկ խումբ և ծավալում համերգային գործունեություն, որը մեծ հետաքրքրություն է առաջ բերում երաժշտասերների շրջանում։

Այդ համերգների առթիվ Թիֆլիսի «Մշակ» թերթը 1921 թ. ապրիլի 10-ի № 73-ում գրում է. «Վաղուց բացակայում էր մեր քաղաքում քառաձայն երգեցողությունը, բայց այս տարի շնորհիվ նոր հրավիրված ուսուցիչ Դ. Ղազարյանի, հաճախ ենք լսում կանոնավոր բազմաձայն երգեցողություն։ Դեռ տարվա սկզբին նա կազմակերպել էր մի համերգ, որը ունկնդիրներին կարողացավ գեղարվեստական բավականություն պատճառել։ Այնուհետև առաջ եկան երեկույթներ, ցերեկույթներ, որտեղ դարձյալ փայլում էին Դ. Ղազարյանի երգեցիկ խմբերը»[1]։

Երգեցիկ խումբը հանդես է եկել նաև եկեղեցում՝ կիրակի և տոն օրերի արարողությանը։

1912 թ. մարտի 8-ին տեղի հայոց դպրոցի դահլիճում, Կարա-Մուրզայի մահվան տասնամյակի կապակցությամբ Դ. Ղազարյանը կազմակերպում է ճոխ համերգ, որտեղ հանդես է գալիս երկսեռ քառաձայն երգեցիկ խումբը, կատարելով Կարա-Մուրզայի ստեղծագործությունները։ Ուշագրավ էին նրա երգեցիկ խմբի համերգները՝ ծրագրերում մեծ տեղ գտած ժողովրդական և հե-

---

1 Կարա-Մուրզայի համերգները կազմվանում եղել են 1891 և 1898 թթ.։ 1900 թ. նախատեսված համերգը չի կայացել։

ղափռխական երգերով։ Նա ակտիվ մասնակցում է նաև թատերական խմբի աշխատանքներին։ Իր համեստությամբ և աշխատասիրությամբ նա մեծ հարգանք էր վայելում կաղզվանի երիտասարդության և ուսանողության շրջանում։

Նոր ուսումնական տարում (1912 թ.) Դ. Ղազարյանը տեղափոխվում է Նոր-Բայազետ, որպես հայոց և քաղաքային դպրոցների երգ-երաժշտության դասատու։ Նույն նվիրված աշխատանքը՝ երգեցիկ խումբ, համերգներ, երեկույթներ, լարային նվագախումբ և այլն։ Դերասան Պահարեն, որ այդ շրջանում հանդիպել է Դ. Ղազարյանին, հիշատակում է, որ Նոր-Բայազետում լարային նվագախմբի հետ առաջին անգամ ծանոթացան Դ. Ղազարյանի միջոցով։ Նա իր նվիրական աշխատանքով մեծ հեղաբերքրություն մտցրեց Նոր-Բայազետի երաժշտական կյանքում։

1914 թ. Դանիել Ղազարյանը վերադառնում է Թիֆլիս՝ երաժշտական կրթությունը շարունակելու, միաժամանակ աշխատանքի անցնելով Քամոյան օրիորդաց դպրոցում որպես երգ-երաժըշտության դասատու։

Դեռևս 1908 թ. Թիֆլիսում Դ. Ղազարյանը ծանոթանում է երիտասարդ երաժիշտ Երվանդ Սարդարյանի հետ, որը Դանձակից եկել էր Թիֆլիս երաժշտական մասնագիտական կրթություն ստանալու։ Վերջինս օգնում է նրան տեղավորվելու և երաժշտական ուսումնարան ընդունվելու

հարցում, և այդպիսով նրանք մտերմանում են ու երկար տարիներ աշխատում համատեղ։

1912 թ. Թիֆլիսում կոմպոզիտորներ Սպ. Մելիքյանի, Միք. Միրզոյանի և ուրիշների նախաձեռնությամբ կազմակերպվում է «Հայոց երաժշտական ընկերություն», որը երաժշտական դաստիարակության և պրոպագանդայի ավելի լայն խնդիրներ է դնում իր գործունեության հիմքում։ Այդ շրջանում է սկսում իր երաժշտական-ստեղծագործական և մանկավարժական գործունեությունը երիտասարդ կոմպոզիտոր Դ. Ղազարյանը։

Դպրոցներում սկսվել էին գործել երգեցիկ խմբեր։ Սպ. Մելիքյանը, որը նոր էր վերադարձել Շուշիից, աշխատում էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և ղեկավարում դպրոցի երգեցիկ խումբը, որն իր կատարողական արվեստով մեծ համբավ էր վայելում։ Համերգային գործունեությունից բացի, կիրակի օրերը երգեցիկ խումբը մասնակցում էր եկեղեցում պատարագի արարողությանը։ Մարիամյան-Հովնանյան օրիորդաց դպրոցում աշխատում և երգեցիկ խումբը ղեկավարում էր Ռոմանոս Մելիքյանը, հետագայում Արմեն Տիգրանյանը, ավելի ուշ՝ Արշակ Տեր-Հովսեփյանը, Գայանյան օրիորդաց դպրոցում՝ Ազատ Մանուկյանը, Քամոյան դպրոցում՝ Դանիել Ղազարյանը, որը միաժամանակ Թիֆլիսի Քամոյան եկեղեցում ղեկավարում էր երգեցիկ խումբը, առաջին անգամ ֆիլհարմոնիայի նվագակցու-

թյամբ։ Դպրոցական երգեցիկ խմբեր էին կազմակերպվել քաղաքային և ծխական դպրոցներում Միք. Մխրզոյանի, Հակոբ Հովհաննիսյանի, Դանիել Ղազարյանի, Երվանդ Սարդարյանի, Սարգիս Մուրադյանի և ուրիշների ղեկավարությամբ։ Դպրոցական երգչախմբերը հիմնականում մասնակցում էին դպրոցական միջոցառումներին՝ հանդեսներին, ցերեկույթներին։

Քամոյան դպրոցում Դ. Ղազարյանի կատարած աշխատանքի մասին հետաքրքիր հուշեր է պատմում նրա աշակերտուհիներից՝ այժմ կինոդերասանուհի Արշալույս Դովլաթյանը։

«Դանիել Ղազարյանի ակտիվ մասնակցությամբ դպրոցում կազմակերպվեց երաժշտասերների ընկերություն։ Ընկերության նպատակն էր բարձր հիմքերի վրա դնել աշակերտության գեղագիտական դաստիարակության գործը։ Ընկերությունը կազմակերպում էր համերգներ, ցերեկույթներ, լույս էր ընծայում «Կոկոն» ամսաթերթը, կազմակերպում էր դասախոսություններ արվեստի և երաժշտության շուրջը։ Դ. Ղազարյանը մեզ մասնակից էր դարձնում մանկական օպերաների՝ «Անգործ մանուկ», «Տիկնի պսակ», «Հաղթված բազե» ներկայացումներին։ Անմոռանալի է «Հաղթված բազե» օպերայի առաջին բեմադրությունը Թիֆլիսի օպերային թատրոնում մեր մասնակցությամբ։

Այդպես անսպառ եռանդով ամենուր և ամեն

օր նա մեր մանուկ սրտերում զարթեցնում էր սեր դեպի երաժշտությունը»։

Ծննդավայրը թողնելուց հետո Դ. Ղազարյանը 1913 թ. մեկնում է Շուշի, իր ընկերոջ՝ կոմպոզիտոր Ե. Սարդարյանի հետ համերգներ կազմակերպելու նպատակով։

Բազմաձայն երգեցողության կուլտուրան, սերը դեպի երգչախմբային արվեստը ավանդույթ էր դարձել Շուշիի երաժշտասեր հասարակության համար։ Այդ բնագավառում շնորհակալ աշխատանք էին կատարել Կարա-Մուրզան, Գ. Սյունին, Սպ. Մելիքյանը, Ե. Բաղդասարյանը, Ստ. Դեմուրյանը[1]։

Դ. Ղազարյանին և Ե. Սարդարյանին հաջողվում է թեմական և Մարիամյան օրիորդաց միջնակարգ դպրոցների աշակերտ-աշակերտուհիներից և սիրողներից համալրել երգեցիկ խումբը և նախապատրաստվել համերգի։ Երիտասարդ խմբավարներին այդ գործում մեծ աջակցություն է ցույց տալիս Ստեփան Դեմուրյանը, որն այդ շրջանում աշխատում էր Շուշիում։

Համերգը մեծ ընդունելության է արժանանում, կատարվում են Կարա-Մուրզայի, Կոմիտասի, Գ. Սյունու, Ե. Բաղդասարյանի, Ստ. Դեմուրյանի,

1 Շուշիում երգեցիկ խմբի համերգներով Կարա-Մուրզան հանդես է եկել 1894 և 1901 թթ., Գրիգոր Սյունին՝ 1895 և 1904 թթ., որից առաջինը՝ բացառապես իր ստեղծագործություններից կազմված ծրագրով։ Սպ. Մելիքյանը, որպես երաժշտության դասատու և խմբավար, աշխատել է 1908 թ., Ստեփան Դեմուրյանը թեմական և Մարիամյան դպրոցներում՝ 1892 թ. (ընդմիջումներով) մինչև 1917 թ.։

Դ. Ղազարյանի և Ե. Սարդարյանի ստեղծագործությունները

Համերգին մենակատարմամբ հանդես է եկել շուշեցիների սիրելի երաժշտագետ Ստ. Դեմուրյանը, կատարելով իր «Աղբյուր, աղբյուր» և ժողովրդական «Համեստ աղջիկ» երգերը։

Շուշեցիները, և հատկապես երիտասարդությունը, ոգևորված համերգի հաջողություններով, ջերմությամբ են ճանապարհում երիտասարդ, դեռևս ուսանող կոմպոզիտորներին։

Այսպիսով, Դ. Ղազարյանի՝ որպես կոմպոզիտոր-խմբավարի առաջին այցը իր ծննդավայրը նրան ստեղծագործական նոր լիցք է տալիս հետագա աշխատանքների համար։

Երգչախմբային արվեստը էլ ավելի մասսայականացնելու և հայ կոմպոզիտորների ժողովրդական ստեղծագործությունները ավելի լայն մասշտաբով պրոպագանդելու նպատակով Թիֆլիսում կազմակերպվում են արտադպրոցական երգեցիկ խմբեր։

Թիֆլիսում սկսում է գործել «Հայ երգչախմբային ընկերության» երկսեռ երգչախումբը կոմպոզիտոր Սպ. Մելիքյանի ղեկավարությամբ և ապա Դ. Ղազարյանի և Ե. Սարդարյանի նախաձեռնությամբ կազմակերպված «Կովկասյան խորային ընկերության[1]» մանկական և մեծահասակների երգչախմբերը։

---

1 «Կովկասյան խորային ընկերությունը» կազմակերպվել է 1917 թ.։ Նրա կազմակերպիչներն են եղել կոմպոզիտոր-



Դ. Զազարյանը կոմպոզիտոր Ա. Մայիլյանի հետ



Դ. Վաշարյանը կոմպոզիտոր՝ եր Ա. Մանուկյանի, Ե. Սարդարյանի և Միք. Միրզոյանի հետ

Թիֆլիսի «Գեղարվեստ» ալմանախի (խմբագիր՝ Գ. Լևոնյան) 1917 թ. № 6-ում կարդում ենք. «Թիֆլիսի հայ երաժշտական միջավայրում կան մի խումբ երիտասարդ ուժեր, որոնք իրենց գործունեությամբ և եռանդով ավելի են երևում հրապարակի վրա։ Այդ խմբի մեջ ամենից շատ լսվում է Երվանդ Սարդարյանի, Դանիել Ղազարյանի և Արշակ Տեր-Հովսեփյանի անունները։ Սրանք հրատարակել են մի շարք երգեր, մասնակցել բազմաթիվ երեկույթների՝ թե՛ անհատապես և թե՛ երգչախմբի հետ։

Հայ երաժշտական ընկերության ծրագիրը երևի նեղ գտնելով, այս երիտասարդ ուժերը 1917 թ. հիմնեցին «Հայ երգչախմբային ընկերություն, որն ունեցավ իր առաջին հանդիսավոր հավաքը»։

Հատկապես մեծ աշխատանք է ծավալում մանկական երգչախումբը։ Նրա համերգները, որոնք սկզբում տեղի էին ունենում դպրոցական փոքրիկ դահլիճներում, հետզհետե ավելի մեծ քանակությամբ ունկնդիրներ են գրավում։ Դպրոցականների համար տրվող համերգներն արդեն սիստեմատիկ բնույթ են կրում և անցնում ավելի մեծ դահլիճներ՝ այն է Թիֆլիսի ժողովրդական տունը, Թիֆլիսի օպերային և բալետի պետական

խմբավարներ Դ. Ղազարյանը, Ա. Մանուկյանը, Ե. Սարդարյանը, Ա. Տ. Հովսեփյանը, Հ. Տեր-Հարությունյանը։ Այս ընկերությունը գործել է մինչև 1921 թվականը։ Վրաստանում սովետական կարգերի հաստատումից հետո բոլոր ստեղծագործական, կատարողական ուժերը համախմբվել են «Հայարտան» (Հայ արվեստի տուն) շուրջը։

թատրոնը, որտեղ կազմակերպվում են կիրակնօրյա ցերեկույթներ և այլն։

Մամուլը դրական գնահատական է տալիս այդ միջոցառումներին, համարելով այն մանուկների գեղագիտական դաստիարակության գործում շնորհակալ աշխատանք։ Այդ միջոցառումներին մեծ օժանդակություն են ցույց տալիս գրողներ Ղ. Աղայանը, Հովհ. Թումանյանը, Աթ. Խնկոյանը և ուրիշներ։ Սրանց մանկական բանաստեղծությունների հիման վրա գրվում են երգեր, մանկական երաժշտական պատկերներ։

Հատկապես մեծ է Հովհ. Թումանյանի դերը մանկական երաժշտական գրականության ստեղծման ու զարգացման գործում։ «Կյանքիս լավագույն վայրկյանները կապված են մանուկների հետ, նոր սերնդի հետ»,— ասել է բանաստեղծը և իր խորհուրդներով ու հիասքանչ բանաստեղծություններով օգնել կոմպոզիտորներին ստեղծելու նորանոր երգեր։ «Մանուկներն իրենք երաժշտություն են, դրա համար շատ են սիրում երգ-երաժշտությունը։ Տվե՛ք, եղբայր, շատ երգեր տվեք մեր մանուկներին»— կոմպոզիտորներին դիմած այս խոսքերը տպավորվել են Դ. Ղազարյանի հուշերում և ոգևորել ստեղծագործական աշխատանքում։

Պատահական չէ, որ կոմպոզիտորներից շատերը, որոնց թվում և Դ. Ղազարյանը, մեծ թվով երգեր են գրել Հովհ. Թումանյանի բանաստեղծությունների վրա՝ «Փիսիկի դանգատը», «Փի-

սոն», «Շնիկը», «Ահա այսպես հաչում եմ ես», «Լուսնակն ելավ», «Զուկն է լողում» և վերջապես «Դիքորը» ու «Գայլը» մանկական օպերաները և այլն։

Ինչպես վերը նշված, այնպես էլ Ղ. Աղայանի, Աթ. Խնկոյանի, Հ. Աղաբաբի, Հ. Հայրապետյանի և շատ ուրիշների ստեղծագործությունների հիման վրա գրած երգերը, Դ. Ղազարյանի մանկական երգերի շարքը, որոնց թիվն անցնում է հարյուրից («Սագիկ-մագիկ», «Սիրուն թիթեռ», «Աշնան վերջը», «Դաշտի շողիկ», «Աշուն», «Պըստիկ ծիտ եմ», «Էծիկ», «Սիրուն գարուն», «Ձմեռ» և շատ ու շատ ուրիշներ), լավագույն գործեր են, որոնք երկար տարիներ երգվել են մեր դպրոցներում, սիրվել են մանուկների կողմից և շատ շատերը մինչև այսօր էլ իրենց արժանի տեղն ունեն դպրոցական ծրագրերում։

Իրենց համատեղ աշխատանքի մասին կոմպոզիտոր Երվանդ Սարդարյանը գրում է. «Մի շարք դպրոցական երգեր, ինչպիսիք էին՝ Ա. Մանուկյանի «Սիծեռնակը», Դ. Ղազարյանի «Թիթեռը», Միք. Միրզոյանի «Աշունը», Ե. Սարդարյանի «Ուռենու տակին», Ա. Մայիլյանի «Կարմիր վարդիկը» և այլն, անցնում էինք համապատասխան դասարանում, ապա բեմում կատարում էր երգչախումբը, այնուհետև նույն երգը կատարում էին միասին՝ երգչախումբը և թատրոնում գտնվող բոլոր երեխաները՝ իրենց դաստատուների հետ։ Սովորաբար առաջին մասում կատարվում էր հա-

մերգային բաժինը, իսկ երկրորդ բաժնում՝ մանկական օպերաները։ Օպերաները հետևյալներն էին. Ա. Մանուկյանի «Չարի վերջը», Սարգիս Մուրադյանի «Շունն ու կատուն», Ե. Սարդարյանի «Պոչատ աղվեսը», Դ. Ղազարյանի «Անգործ մանուկը» և «Հաղթված բազեն»։ Այս միջոցառումները ընդգրկեցին մեծ թվով դպրոցականների ու ծնողների և մեծ դեր կատարեցին նրանց գեղագիտական դաստիարակության գործում»։

Մանկական երգերին զուգընթաց Դ. Ղազարյանը գրում է նաև մի շարք երգեր, ռոմանսներ՝ «Լանջեր մարջան», «Անուշ գարուն», «Ուռի», «Քույր իմ նազելի», «Աշնան գիշեր» և այլն, որոնք իրենց վառ մեղեդիականությամբ, ջերմությամբ և պարզությամբ կարճ ժամանակամիջոցում լայն մասսայականություն են վայելում։

«Հիշում եմ նրա «Լանջեր մարջանը» (որն ի դեպ, ինձ է նվիրված),— գրում է ժողովրդական արտիստ Շարա Տալյանը։— Երբ առաջին անգամ կատարեցի, դահլիճը հռնդաց, հանդիսականները ստիպեցին կրկնել։ Հետևյալ օրը, կեսօրին, նոր էի փողոց դուրս եկել, երբ ականջիս հասավ «Լանջեր մարջանը»։ Երիտասարդների մի խումբ, ճիշտ է աղավաղված տեքստով, սակայն երգի տիրապետման ամենայն ճշտությամբ, երգում էին «Լանջեր մարջանը»։ Այո՛, մեր սիրելի Դանիելի երգերը գողտրիկ էին, գերող ու թևավոր»[1]։

1. Տալյան Շ., «Դեպքեր, դեմքեր, մտքեր», «Հայաստան» հրատ., 1973։

Արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Միքայել Միրզոյանը հետևյալ գնահատականն է տվել Դ. Ղազարյանի ստեղծագործություններին՝ «Նրա երգերը իրենց բնույթով ընդհուպ մոտենում են մեր ժողովրդական երգի ակունքներին, բայց և դրանցից տարբերվում են այն ուրույն գծերով, որ ինչ պայմաններում լինելու լինեն դրանք, չենք կասկածի, որ պատկանում են Դ. Ղազարյանի գրչին։ Նրա երգերը աչքի են ընկնում լայնաշունչ մեղեդիականությամբ, խորը հուզականությամբ, ձևի պարզությամբ, սահուն, բնական ձայնախաղերով, տրամաբանական շեշտերով, կուլմինացիայով»[1]։

Թիֆլիսում ունեցած հաջողություններից հետո Դ. Ղազարյանը և Ե. Սարդարյանը մեկնում են Սուխումի, Ախալցխա, Ախալքալաք և այլ հայաբնակ վայրեր, տեղերում կազմակերպում դպրոցական երգեցիկ խմբեր, կրկնելով նույն համերգները և մանկական օպերային ներկայացումները։

Պետք է նշել, որ այս միջոցառումները կատարվում էին անձնական նախաձեռնությամբ, առանց որևէ նյութական օժանդակության։

Սուխումիում կայացած համերգների մասին «Գոլոս տրուդավոյ Աբխազիի» թերթը 1922 թ. մայիսի 25-ի համարում գրում է. «Սուխումիի

---

1 Միրզոյան Միք., Դ. Ղազարյանի ստեղծագործությանը նվիրված երեկոյի բացման խոսքից (1948 թ.), Դ. Ղազարյանի արխիվ։

հայկական գաղութի համար այս համերգը հանդիսացավ որպես երևույթ, որովհետև Սուխումիի հայ աշխատավորությունը զրկված էր ոչ միայն երաժշտական, այլև ընդհանրապես կուլտուրական միջոցառումներից և ետ էր մնացել Ղրիմի և Հյուսիսային Կովկասի գաղութից։ Այդ օրը տեղի հայ աշխատավորության երիտասարդ սերունդը առաջին անգամ լսեց իրեն մոտ և հասկանալի երգերը։ Չնայած նախապատրաստական կարճ ժամանակաշրջանին, համերգն անցավ հաջող։ Երեխաները ստացան մեծ բավականություն»։

Նույն գնահատականին էին արժանանում այլ վայրերում տրված համերգները, որոնք դարոցականների համար տոնական բնույթ էին կրում և կրկին ու կրկին ապացուցում Դ. Ղազարյանի և Ե. Սարդարյանի շնորհակալ աշխատանքը և նրանց կազմակերպչական ընդունակությունները։

1919 թ. Հովհ. Թումանյանի ծննդյան 50-ամյակի առթիվ Թբիլիսիում ներկայացվում է Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան, վերջինիս ղեկավարությամբ, լավագույն ուժերի մասնակցությամբ, ուժեղացված երգեցիկ խմբով, որը նախապատրաստում է Դ. Ղազարյանը։

Դ. Ղազարյանն աշակերտության ուժերով կազմակերպում է նաև ճոխ երաժշտական երեկո, կատարելով Հովհ. Թումանյանի տեքստերով գրված լավագույն երաժշտական ստեղծագործությունները։ Երեկոն անցնում է մեծ հաջողությամբ։ Հովհ. Թումանյանը, որը ներկա էր

երեկոյին, իր շնորհակալական խոսքն է ասում և համբուրում Դ. Ղազարյանին։

Վրաստանում սովետական կարգերի հաստատումից հետո դադարեցնում են իրենց աշխատանքները մինչև այդ գործող երաժշտական ընկերությունները, որոնց փոխարինում է Թիֆլիսում կազմակերպված Հայ արվեստի տունը («Հայարտունը»), որտեղ ընդգրկվում են Թիֆլիսում ապրող գրողներ և արվեստագետներ։

Հայարտան նախաձեռնությամբ Դ. Ղազարյանը իր եղբոր՝ Վաղինակ Ղազարյանի հետ մեկնում է Հայաստանի շրջանները. Ալեքպոլ (Լենինական), Ղարաքիլիսա (Կիրովական), Դիլիջան և Նոր Բայազետ (Կամո)՝ դպրոցականների համար համերգներ կազմակերպելու նպատակով։

Վաստակաշատ ուսուցիչ Մկրտիչ Թամիրյանը[1], որը սովորել և երկար տարիներ աշխատել է Լենինականում, հիշատակում է, որ Դ. Ղազարյանին առաջին անգամ հանդիպել է Ալեքպոլում 1912 թ., որտեղ եկել էր համերգներ տալու։

Երաժշտագետ Պարույր Բաբայանը, որն Ալեքպոլում ղեկավարում էր երկու դպրոցների աշակերտ-աշակերտուհիներից կազմված քառաձայն

---

1 Մ. Թամիրյանը իր երաժշտական սկզբնական կրթությունը ստացել է Ալեքպոլում՝ երաժշտության դասատուներ Արշակ Բրուտյանի, Պարույր Բաբայանի մոտ, ապա Լենինականի երաժշտական ստուդիայում։ Երկար տարիներ աշխատել է որպես երգ-երաժշտության դասատու, խմբավար ,մեթոդիստ։ 1912 թ. Ալեքպոլում մասնակցել է Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի առաջին բեմադրությանը՝ կատարելով ծառուհու դերը։

երգեցիկ խումբը, տրամադրում է այն Դ. Ղազարյանին, որը Կոմիտասի, Կարա-Մուրզայի ու իր ստեղծագործություններից կազմված ծրագրով ելույթ է ունենում թատրոնի դահլիճում։ Համերգն անցնում է հաջողությամբ։

Դ. Ղազարյանը զբաղվում է նաև մանկական երգեցիկ խմբի կազմակերպմամբ և դպրոցականների համար համերգներ ու օպերային ներկայացումներ տալով։

Համերգ-ներկայացումները մեծ հաջողությամբ կրկնվում են քաղաքում՝ որբանոցների երեխաների համար, և ապա մոտակա գյուղերում։ «Խորհրդային Հայաստան» և «Շիրակի ռանչպար» թերթերը բարձր գնահատական են տալիս այդ միջոցառմանը, նշելով Դանիել և Վաղինակ Ղազարյանների շնորհակալ աշխատանքը։

Դյուզքանդում բացօթյա տրված համերգ-ներկայացման մասին «Շիրակի ռանչպար» թերթը գրում է. «Ծառերի հովանու տակ, կանաչների վրա տեղի ունեցավ համերգ-օպերան, որը մեծ հաջողություն ունեցավ, խոր տպավորություն թողնելով գյուղացիների վրա։ Ներկայացմանը ներկա եղող երեխաները հրճվանքի մեջ էին, նրանց ուրախությանը չափ ու սահման չկար։

Շատ և շատ ցանկալի էր, որ եղբայր Ղազարյանները երգեցիկ խմբով մի պտույտ անեին մեր գավառի գոնե մեծ գյուղերում»։

Ոգևորված իր աշխատանքի արդյունքով և արժանանալով պատշաճ գնահատականի, Դ. Ղա-

զարյանը նոր եռանդով շարունակում է իր աշխատանքը։

Նույն թվականի աշնանը Դ. Ղազարյանը մեկնում է Բաքու։ Կոմպոզիտոր-մանկավարժ Անտոն Մայիլյանի և երգ-երաժշտության դասատու Զիլխաչյանի օգնությամբ կազմակերպում է համերգներ և մանկական օպերային ներկայացումներ ինչպես դպրոցականների, նույնպես և մեծահասակների համար։

Երեք ընկերների կոլեկտիվ աշխատանքի արդյունքն ակներև էր։ Նորից դրվատանքի խոսքեր, ջերմ ցանկություններ։

Նշվում են Դ. Ղազարյանի ստեղծագործական հաջողությունները, առաջարկություններ արվում շարունակելու դպրոցականների դեղագիտական դաստիարակության գործը Բաքվում և այլն։

Ինչպես տեսնում ենք, Դ. Ղազարյանն իր ստեղծագործական-հասարակական գործունեությունը սկսել է քաղաքից-քաղաք, գյուղից-գյուղ շրջելով, նպատակ ունենալով իր հնարավորությունների սահմաններում օժանդակել դպրոցականների երաժշտական-գեղագիտական դաստիարակության գործին, պրոպագանդել հայ երգը, օգնել երգչախմբային արվեստի զարգացման գործին։

***

1922 թ. վերջերին նույն նպատակով Դ. Ղազարյանը մեկնում է Բաթումի։ Այստեղ նույնպես

բարձր գնահատականի է արժանանում նրա աշխատանքը, նշվում նրա ստեղծագործությունների ժողովրդականությունն ու վառ մելոդիականությունը։

Հիշատակության արժանի է մի դեպք, որը վերաբերում է Դ. Ղազարյանի Բաթումիում դանվելու շրջանին։

«1922 թ. վերջերին Բաթումիի նավահանգստին է մոտենում «Պարսկաստան» մականվամբ մի ապրանքատար շոգենավ Ստամբուլ—Ռուսաստան երթուղով։ Շոգենավը դիմավորում են տեղացի բնակիչները, որոնց թվում և հայեր։ Այդ նավով Սովետական Հայաստան էին գալիս դերասաններ մի խումբ Վահրամ Փափազյանի ղեկավարությամբ, այդ թվում Գրիգոր Ավետյանը, Ջանանը, Հրաչյա Ներսիսյանը և ուրիշներ։

Մինչև Երևանի պետական թատրոնից պաշտոնական հրավեր ստանալը, Բաթումի ժամանող դերասանները Վահրամ Փափազյանի ղեկավարությամբ, տեղի սիրողների մասնակցությամբ, կազմում են թատերական խումբ և սկսում ներկայացումներ տալ ոչ միայն Բաթումիում, այլև Սուխումիում, Սոչիում և Սևծովյան շրջանի հայաշատ քաղաքներում։ Դերասանական խումբը իր խաղացանկն էր մտցրել նաև հայկական երաժշտական կոմեդիաներ, որոնք մեծ հաջողություն են ունենում։ Հիշելով հայ երաժշտության կլասիկ Տիգրան Չուխաջյանի հանրամատչելի «Լեբլեբիջի» կոմիկական օպերան, որոշում են բեմադրել այն։

Բայց պարզվում է, որ դերասաններից ոչ մեկը իր հետ չի վերցրել օպերայի պարտիտուրան, իսկ Բաթումիում հնարավոր չէր գտնել այն։ Այստեղ օգնության է գալիս Դանիել Ղազարյանը, որը, օգտվելով Հրաչյա Ներսիսյանի փայլուն հիշողությունից, նրա երգածից ձայնագրում է ամբողջ օպերան, որը և բեմադրվում է մեծ հաջողությամբ»[1]։

Աջարիայի լուսավորության ժողովրդական կոմիսարիատը նախատեսել էր Բաթումիում բացել երաժշտական ստուդիա դպրոցականների համար։ Դ. Ղազարյանի կարճատև, բայց արդյունավետ գործունեությունը այդտեղ առիթ է դառնում նրան հրավիրելու որպես երաժշտական ստուդիայի կազմակերպիչ և դիրեկտոր։

Ընդունելով հրավերը, Դ. Ղազարյանն իրեն հատուկ եռանդով անցնում է ստուդիայի կազմակերպչական աշխատանքներին։ Հրավիրվում են դասատուներ՝ Դ. Լևկիևը (ջութակ), Օ. Բաբասյանը (դաշնամուր), Վենեցիանովը (երգ), Դ. Ղազարյանը (դիրեկտոր և տեսական առարկաներ) և ուրիշներ[2]։

---

1 Ռիզան Ս., «Հրաչյա Ներսիսյան», էջ 18։ Հ. Ներսիսյանի արխիվ, Ջարենցի անվան գրականության և արվեստի թանգարան։

2 Դ. Լևկիևը և Օ. Բաբասյանը հետագայում աշխատում են Երևանի պետական կոնսերվատորիայում։

Այդ ստուդիայում են իրենց սկզբնական երաժշտական կրթությունը ստացել Հակոբ Խանջյանը (Հայկ. ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ), Սուրեն Ջաքարյանը (ջութակահար)։

Ինչպես նշել է «Տրուդովոյ Բատում» թերթը, երաժշտական ստուդիայում առաջին ուսումնական տարում ընդգրկվել է 100-ից ավելի երեխա։ Ստուդիական հաշվետու երեկոները՝ աշակերտական ելույթները, դրական արդյունք են տվել և առաջին իսկ տարվանից ուշադրության արժանացել։

Թիֆլիսի օրինակով Բաթումիում կազմակերպվում է հայ արվեստի տուն, որտեղ Դ. Ղազարյանը դառնում է նրա ակտիվ գործիչներից մեկը։ Նա կազմակերպում է «Հայարտան» քառաձայն երգեցիկ խումբ, հաճախակի հանդես գալիս համերգներով, մասնակցում հանդիսավոր և գրական-երաժշտական երեկոներին։

«Հայարտան» բացման առթիվ և մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հիշատակին նվիրված գրական-երաժշտական երեկույթին (1923 թ. հոկտեմբերի 6-ին) Դ. Ղազարյանը մասնակցում է երգեցիկ խմբով, միաժամանակ բեմադրելով Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի 3-րդ և 4-րդ գործողությունները։ Ինչպես հիշատակում են ժամանակակիցները, երգեցիկ խումբը Դ. Ղազարյանի ղեկավարությամբ շատ խնամքով և գեղարվեստական մեծ ճաշակով կատարել է «Անուշ» օպերայից հատվածներ, մի շարք ժողովրդական երգերի մշակումներ։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո Երևանում կազմա-

կերտված երաժշտական ստուդիան վերակազմվում է կոնսերվատորիայի[1]։

Մանուկների երաժշտական դաստիարակության գործը դարձել էր առաջնահերթ խնդիրներից մեկը։ Արդեն հասունացել էր Լենինականում երաժըշտական օջախ կազմակերպելու հարցը, որի համար հրավիրվում է Դ. Ղազարյանը։

Ուսումնական տարին ավարտվելուց հետո Դ. Ղազարյանը Բաթումիից մեկնում է Լենինական։ Հաղթահարելով բոլոր դժվարությունները, 1924 թ. հունիսի 15-ին Լենինականում բացվում է առաջին երաժշտական օջախը՝ երաժշտական ստուդիան, որը խոշոր դեր է կատարել Հանրապետության երաժշտական կադրերի պատրաստման գործում։

Ստուդիա ընդունվողների դիմումների թիվը հասնում է մոտ 700-ի։ Նախնական քննություններից հետո մնում է մոտ 380 հոգի, բայց նորաստեղծ ստուդիան անկարող էր ընդունել այդքան աշակերտ (համապատասխան շենքի բացակայությունը, որ հիմնականն էր, մասնագետ դասատուների պակասը)։ Աշնանը կատարված երկրորդ ստուգումից հետո մնում է մոտ 180 աշակերտ։

Ստուդիայի նորմալ աշխատանքները հիմնականում սկսվում են հոկտեմբերի 15-ից։ Սկզբնական շրջանում ստուդիայում գործում են դաշնա-

1 Կազմակերպիչ և առաջին դիրեկտոր Ռոմանոս Մելիքյանն։

մուրի, ջութակի, երգի, ժողովրդական գործիքների դասարաններ։ Ստուդիայի դասատուներ են հրավիրվում անվանի երգիչ Տ. Նալբանդյանը (երգ), Կ. Տեր-Ղուկասյանը (ջութակ), Ն. Գանջումյանը (դաշնամուր), Վ. Ղազարյանը (ժող. գործիքներ), Կ. Պապյանը (խմբակ. երգեցող.), Դ. Ղազարյանը (դիրեկտոր և տեսական առարկաներ), հետագայում կոմպոզիտոր Ս. Մուրադյանը և ուրիշներ։

Ստուդիայի ղեկավարությունը սերտ կապեր է հաստատում Երևանի պետական կոնսերվատորիայի, ինչպես նաև Թիֆլիսի և Բաքվի Հայարատան երաժշտական ստուդիաների հետ՝ փորձի փոխանակման նպատակով։ Երևանի կոնսերվատորիայի ռեկտոր, երաժշտագետ Արշակ Ադամյանը, կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը սիստեմատիկ մեթոդական օժանդակություն են ցույց տալիս ստուդիային, հաճախակի լինելով տեղում և ունկնդրելով փակ և հաշվետու համերգները։ Կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանը ստուդիայի գեղարվեստական խորհրդի անդամ էր։ Բացի դուտ ակադեմիական աշխատանքից, որը տարեցտարի նրա կատարած լայն արտադպրոցական-մասսայական աշխատանքով ավելի ու ավելի լավ հիմքերի վրա է դրվում, երաժշտական ստուդիան դառնում է Լենինականի ու նրա շրջանների երաժշտական դաստիարակության հիմնական օջախը։

Ստուդիային կից կազմակերպվում են երաժշտության դասատուների վերապատրաստման դաս-

ընթացներ, երաժշտության դասավանդման վիճակը քաղաքի և գյուղի դպրոցներում բարելավելու նպատակով։ Կազմակերպվում են քառաձայն երգեցիկ խումբ (ղեկ.՝ Կ. Պապյան), մանկական երգեցիկ խումբ (ղեկ.՝ Մ. Թամիրյան), ժողովրդական գործիքների անսամբլ (ղեկ.՝ Վ. Ղազարյան)։

Ստեղծված կոլեկտիվները դպրոցի վոկալ դասարանի սանների մասնակցությամբ պատրաստում են ժողովրդական երգերից և հայ կոմպոզիտորների ստեղծագործություններից կազմված հետաքրքրիր ծրագիր և հանդես գալիս բանվորական ակումբներում, տեքստիլ գործարանում, կարմիրբանակայիններին, երկաթուղայիններին համար և գյուղական վայրերում։

Շիր-Կանալի բացման առթիվ կայանում է ճոխ համերգ, որին մասնակցում են դպրոցի բոլոր կոլեկտիվները։ Բազմավաստակ ուսուցիչ Մ. Թամիրյանը, որի ղեկավարությամբ ելույթ է ունեցել մանկական երգեցիկ խումբը, իր հիշողություններում գրում է. «Համերգն ընդունվեց օվացիաներով և մեծ տպավորություն թողեց։ Առաջին անգամ քառաձայն երգչախումբը երգեց Դանիել Ղազարյանի «Շիր-Կանալ» երգը Գուրգեն Մահարու խոսքերով, որը չերմ ընդունելություն գտավ և հանդիսականների պահանջով կրկնվեց երեք անգամ»։

Դպրոցի մանկական երգեցիկ խումբը պատրաստում է մանկական օպերաներ՝ Դ. Ղազար-

յանի «Հաղթված բազեն», «Գայլը», «Գիքորը», Ս. Մուրադյանի «Շունն ու կատուն»։ Մի շարք երաժշտական պատկերներ քաղաքում մեծ հաջողությամբ կատարվելուց հետո բեմադրվում են Ղարաքիլիսայի, Արթիկի և գյուղական դպրոցների աշակերտության համար; գեղագիտական մեծ հաճույք պատճառելով նրանց։

Երաժշտական ստուդիան, Երևանի կոնսերվատորիայի օրինակով, ուսանողության և դասատուների մասնակցությամբ կազմակերպում է համերգ-զրույցներ նվիրված հայ կոմպոզիտորների ստեղծագործություններին։ Այդ գործին Դ. Ղազարյանը մասնակից է դարձրել տարբեր առիթներով քաղաքում գտնվող պրոֆեսիոնալ կատարողների՝ կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյան, Տիգրան Նալբանդյան, Շարա Տալյան, Մարիանա Սեդմար, երգիչ-երգչուհիներ, Երևանի կոնսերվատորիայի դասատուներ և ուսանողներ։

Այդ համերգներից ուշագրավ են 1927 թ. Կարա-Մուրզայի մահվան 25-ամյակի առիթով կազմակերպված երեկոն, որտեղ Կարա-Մուրզայի ստեղծագործությունների կատարմամբ հանդես է եկել երգեցիկ խումբը Դ. Ղազարյանի ղեկավարությամբ, ինչպես նաև Բեթհովենի մահվան 100-ամյակին նվիրված երեկոն և այլն։

***

Լենինականի երկրաշարժից հետո ստուդիայի աշխատանքները դժվարանում են, մանավանդ որ

այն կազմակերպված էր տնտեսական ընկերություններով։ Դրանից հետո եղբայրական հանրապետություններում կատարվում են նվիրատվություններ քաղաքին պատճառած ավերածությունները վերացնելու համար։ Այդ նպատակով ստուդիայի վարիչ Դ. Ղազարյանը համերգային շրջագայության է մեկնում Թբիլիսի, Բաքու։

«Մարտակոչ» թերթը 1927 թ. հունվարի 22-ին գրում է. «Կիրակի, հունվարի 23-ին մանուկ և պատանի հրավիրվում են Ռուսթավելու մեծ թատրոն, լսելու և տեսնելու «Հաղթված բազե» մանկական օպերան, որից գոյացած արդյունքը հատկացվում է Լենինականի միակ երաժշտական ստուդիային, որն արդեն չորս-հինգ տարվա պատմություն ունի և որտեղ իրենց երաժշտական կրթությունն են ստանում Լենինականի բազմաթիվ մանուկներ և պատանիներ»։

Վերադառնալով շրջագայությունից, Դ. Ղազարյանը սկսում է ստուդիայի վերակազմման աշխատանքները։ Ստուդիան տարեցտարի ավելի ու ավելի մեծ հեղինակություն է վայելում, նրա շրջանավարտներից շատերը, ավարտելով դասընթացը, անցնում են պրակտիկ աշխատանքի կամ ընդունվում կոնսերվատորիա։

Լենինականում աշխատած տարիներին Դ. Ղազարյանի տեսադաշտից դուրս չեն մնում դպրոցականները։ Մանուկների երաժշտական դաստիարակությունը նրան հուզող խնդիրներից մեկն էր։ Նա զբաղվում է մանկավարժական աշ-

խատանքով, ստանձնելով երկաթուղային դպրոցների և մանկավարժական ուսումնարանի երգ-երաժշտության դասերը, միաժամանակ ղեկավարելով երգ-երաժշտության դասատուների դասընթացները։ Դպրոցականների համար գրում է մեծ թվով երգեր, հատկապես տարրական դասարանների աշակերտության համար, որոնք լույս են տեսնում երեք տետրով, հիմնականում Հովհ. Թումանյանի, Ղ. Աղայանի, Աթ. Խնկոյանի, Հ. Աղաբաբի և Հ. Հայրապետյանի տեքստերով։ Դրանցից են՝ «Մագիկ-մագիկ», «Սարի լանջը», «Հա դան-դանի», «Միտիկի սերը», «Միտիկները հյուր են եկել», «Գարուն» և շատ ուրիշներ։

Մեծ են Դանիել Ղազարյանի ծառայությունները Լենինականի երաժշտական ստուդիայի կազմակերպման, դպրոցականների երաժշտական դաստիարակության և երաժշտական կյանքի զարգացման գործում։ Այդ աշխատանքը նա սիրով գլխավորեց մոտ տասը տարի։

***

Լենինականում աշխատած տարիներին, ամառային արձակուրդների ժամանակ, Դ. Ղազարյանը մեծ եռանդով շարունակում է իր գործունեությունը նաև Հյուսիսային Կովկասի հայաշատ վայրերում։

Քսանական թվականների վերջերին Դ. Ղազարյանը ժամանակավորապես թողնում է Լենինա-

կանը և համերգներ կազմակերպելու նպատակով մեկնում Արմավիր, Կրասնոդար, Ռոստով, Նախիջևան և այլն։ Քառաձայն երգչախմբերից բացի, կազմակերպում է մանկական երգչախմբեր, օպերային ներկայացումներ, համերգներ։

Ինչպես միշտ, միջոցառումներն ընդգրկում են մեծ թվով երաժշտասերների, դպրոցականների։ Համերգները մեծ տպավորություն են թողնում։ Հատկապես բարձր է գնահատվում Դ. Ղազարյանի աշխատանքը հայ ժողովրդական երգի ու երաժշտության տարածման և այն հայաշատ վայրերում հնչեցնելու համար, «երգեր, որոնք այնքան վճիտ են, որքան բարձրաբերձ լեռներից իջնող գետակների կանչն ու կարկաչը և այնպես ներդաշնակ՝ ինչպես գեղածիծաղ դաշտերի մեջ սավառնող թռչունների դայլայլը»,— կարդում ենք մամուլում։

Կրասնոդարում կազմակերպված համերգներից հետո, երգեցիկ խմբի անունից, Պետրոս Մոճոռյանը հետևյալն է գրում Դանիել Ղազարյանին. «Դուք հայ ժողովրդի անուշ մեղեդիները տանում ու լսելի եք դարձնում այդ երաժշտական գանձերը ամեն մի վայր, ուր ապրում է հայ տարագիր ժողովուրդը։

Ով Ձեր այսօրվա համերգը, որը հիշեցնում է մեզ մեր հարազատ հայ աշխատավոր գեղջուկին, հայ չքնաղ գեղջկուհուն, հայրենի լեռներն ու հովերը՝ անջինջ կմնան մեր սրտերում և որպես նշան երախտագիտության, Ձեզ համակրողների

մի խումբ, ցանկանալով Ձեզ անվերջ առաջադիմություն և անսպառ եռանդ, նվիրում է Ձեզ այս փոքրիկ ընծան, գեղարվեստի սիմվոլը, և խընդրում ընդունել այն, ազնիվ երաժշտագետ, որպես հիշատակ այս անմոռաց օրերի»[1]։

Այսպիսի ջերմ խոսքեր են նվիրել Դ. Ղազարյանին բոլոր այն վայրերում, որտեղ նա աշխատել է, պրոպագանդելով հայ ժողովրդական երգը, հայ կոմպոզիտորների՝ Կոմիտասի, Մ. Եկմալյանի, Կարա-Մուրզայի, Գ. Սյունու, Ե. Բաղդասարյանի, իր և ուրիշների ստեղծագործությունները։

Դժվար է եղել տեղերում կազմակերպված երգեցիկ խմբերից բաժանվելը։ Աշխատանքի ընթացքում նրանք սիրել են երգն ու երաժշտությունը, կապվել երաժշտական արվեստին, զգացել կոլեկտիվի մեծ նշանակությունը գեղագիտական դաստիարակության գործում։ Բաժանվել, այդ կնշանակի ցրել կոլեկտիվը, որի հետ կապված են աշխատանքային գեղեցիկ, անմոռաց հուշեր։

Ուշագրավ է այն հանգամանքը, որ այն վայրերում, որտեղ եղել է Դ. Ղազարյանը, նրա վերադարձից հետո շարունակել են գործել երգեցիկ խմբերը։

Հյուսիսային Կովկասում ունեցած հաջողություններից հետո Դ. Ղազարյանը համարձակ քայլ է

1 Պետրոս Մոճոյանի նամակը Դ. Ղազարյանին, Դ. Ղազարյանի անձնական արխիվ։

կատարում՝ իր ստեղծագործությունները ցուցադրելու նպատակով մեկնում է Մոսկվա—Լենինգրադ։ Մոսկվայում Կոմիսարժևսկայայի անվան թատրոնում, իսկ Լենինգրադում կամերային երաժշտության ընկերության դահլիճում կազմակերպած համերգներին հրավիրված ուժերի հետ միասին իր ստեղծագործությունների կատարմամբ հանդես է գալիս նաև Դ. Ղազարյանը։

«Ժիզն իսկուսստվո» ժուռնալի 1929 թ. № 36-ում Ս. Գինզբուրգը գրում է. «Դանիել Ղազարյանը, որպես կոմպոզիտոր, շատ հետաքրքիր երևույթ է։ Հայկական ժողովրդական երաժշտության երկարատև ուսումնասիրությամբ և ըստ երևույթին խորը ընկալմամբ Դ. Ղազարյանը յուրացրել է ժողովրդական երաժշտության գաղտնիքները, եթե նրա ստեղծագործություններում երգերը իսկապես ինքնուրույն գործեր են, այլ ոչ թե վերցված ժողովրդական երգարվեստից, այդ արդեն հեղինակի մեծ ծառայությունն է։ Նրա մելոդիանները ընտիր են, իսկ մեղեդիական դարձվածքները ցայտուն, շարժուն, երգայնությունը մատչելի և միաժամանակ ոչ տրադիցիոն»։

Հատկապես մեծ ընդունելության են արժանանում Դ. Ղազարյանի «Ուռենին», «Լանջեր մարջանը», «Քույր իմ նազելին», «Անուշ գարուն» և մի շարք երգեր, որոնք բնորոշում են նրա ստեղծագործական դեմքը։

Քսանական թվականներին, իհարկե, շատ դժվար էր միայն անձնական նախաձեռնությամբ

զբաղվել երկարատև համերգային գործունեությամբ, բայց նրա լավատեսությունը, հնարագիտությունը, գործին նվիրվածությունը և կազմակերպչական ընդունակությունները նպաստեցին սկսած գործը հասցնելու փայլուն ավարտի։

Վերադառնալով Լենինական, Դանիել Ղազարյանը ստանձնում է երաժշտական դպրոցի ուսումնական մասի վարիչի պարտականությունը, որտեղ աշխատում է մինչև 1933 թ., հետո տեղափոխվում Երևան և շարունակում ստեղծագործական մանկավարժական-հասարակական գործունեությունը։

***

Դ. Ղազարյանը հրավիրվում է Երևանի Մյասնիկյանի անվան դպրոց, որպես երգ-երաժշտության դասատու։ Հետագայում տարբեր ժամանակաշրջաններում աշխատել է Խ. Աբովյանի, Մաքսիմ Գորկու անվան դպրոցներում, ռուսական մանկավարժական ուսումնարանում, էջմիածնում։ Աշխատել է կույր երեխաների դպրոցում, սիրել, փայփայել նրանց, սեր ներշնչել դեպի արվեստն ու երաժշտությունը։ Ղեկավարել է Երևանի Կարմիր բանակի տան երաժշտական ստուդիան և երկար տարիներ՝ քաղժողկրթբաժնի երաժշտական մեթոդական կաբինետը։

Իր փորձառությամբ և հեղինակությամբ նա աշխատել է բարձր հիմքերի վրա դնել երգ-երա-

ժըշտուβյան գործը դպրոցներում։ Արտադպրոցական և դպրոցական երգեցիկ խմբերի ղեկավարներին ուղղված մեθոդական նամակում Դ. Ղազարյանը գրում է. «Երգ-երաժշտուβյունը երեխաների կոմունիստական դաստիարակուβյան մի օղակն է, որը երաժշտական արվեստի միջոցներով նպաստում է սովետական դպրոցականի աշխարհայացքի ձևավորմանը և նրա բարոյական կերպարի դաստիարակմանը։

Խմբական երգը երեխաներին հաղորդակից է դարձնում երաժշտուβյանը և բարձրացնում նրանց վոկալ-խմբական կուլտուրան»։

Դ. Ղազարյանը իր մոտ հիսունամյա գործունեուβյան մեծ մասը նվիրել է մանուկներին՝ դպրոցականներին։ Թե՛ իբրև ստեղծագործող և թե՛ մանկավարժ, նա դաստիարակել է սերունդներ, որոնք երախտագիտուβյամբ են հիշում իրենց ուսուցչին։

«Ես ունեցել եմ երաժշտուβյան և երգեցողուβյան երեք անմոռանալի ուսուցիչներ՝ Ստեփան Դեմուրյան, Սպիրիդոն Մելիքյան և Դանիել Ղազարյան, որոնք մեր հոգում թողել են անմոռանալի և պայծառ հուշեր։ Չի մոռացվում այն մարդը, որը քո հոգու գեղեցիկ զգացմունքների վրա իր խորը կնիքն է դրոշմել։ Դանիել Ղազարյանը այդ մարդկանցից էր։

Նրա գործունեուβյունը ավելի շատ ալքի է ընկել Սովետական Հայաստանում, երբ նա ամբողջուβյամբ նվիրվել էր դպրոցական երաժշտական


գործին։ Նրա մանկական երգերը դպրոցականների սիրած երգերն են։ Նա լինում է դպրոցներում և մեծ ջանասիրությամբ օգնում երաժշտության դասատուներին։ Նրա պարզությունն ու անկեղծ ընկերասիրությունը մեծ համակրանք է առաջացրել նրա նկատմամբ։ Նա սիրելի է և անմոռանալի մեզ համար»[1]։

1934թ. աշնանը երաժշտական հասարակայնությունը նշում է Դ. Ղազարյանի երաժշտական-ստեղծագործական, մանկավարժական և հասարակական գործունեության 25-ամյակը։ Կազմակերպվում են համերգներ կուլտուրայի տան դահլիճում, ռադիոյով, դպրոցականների համար։ Ցուցադրվում են նրա ստեղծագործությունները, մանկական օպերաները։ Դ. Ղազարյանի աշխատանքը բնութագրող հոդվածներ են լույս տեսնում «Սովետական Հայաստան», «Կոմունիստ», «Կուլտուրական ֆրոնտ» թերթերում և «Սովետական արվեստ» ամսագրում։

Արժեքավորելով Դանիել Ղազարյանի ստեղծագործական հասարակական-մանկավարժական 25 տարիների աշխատանքը, արվեստի վաստակավոր գործիչ երաժշտագետ Ս. Գասպարյանը գրում է. «Մեր երաժշտագետների շարքում Դ. Ղազարյանը բեղմնավոր կոմպոզիտորներից մեկն է, որի ստեղծագործությունների զգալի մասն իր մատչելիությամբ, ժողովրդական կոլորիտի ջեր-

1 Մանկավարժական գիտությունների թեկնածու Լևոն Վարդունու հուշերից։

Գ. Դաղաստանցի մեծերգիչները և. Տիգրանեանի և ն. Տիգրանեանի հետ



մությամբ մասսաների սեփականությունն է դարձել և երգվում է Խորհրդային Միության բոլոր հայաբնակ վայրերում ու հարևան հանրապետություններում։

Դ. Ղազարյանը մեր երաժշտական կուլտուրայի բնագավառում խոշոր դեր է խաղացել նաև իր համերգային գործունեությամբ. նա շրջել է Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի մի շարք քաղաքները, գյուղերը, կազմակերպել է քառաձայն երգեցիկ խմբեր, տվել է բազմաթիվ համերգներ, կազմակերպել ու ղեկավարել է մանկական օպերայի աշխատանքները»[1]։

Ութ 25 տարի Դ. Ղազարյանը սիրով և նվիրվածությամբ շարունակից իր ստեղծագործական-մանկավարժական աշխատանքը։ Հրապարակ են գալիս արդիական թեմատիկայով նոր երգեր, համակված ուրախ, պայծառ տրամադրությամբ։ Մեծ առաջնորդին նվիրված՝ Նաիրի Զարյանի բանաստեղծության վրա գրված «Լենին» խմբերգը անմիջական ընդունելություն գտավ դպրոցական ինքնագործ և պրոֆեսիոնալ երգեցիկ խմբերի կողմից։ Սրանք կատարվում էին համերգներին, հանդեսներին, ստուգատեսներին և փառատոներին՝ շատ հաճախ միացյալ երգեցիկ խմբերով։ «Լենին» երգը հրապարակվեց թերթերում, ամսագրերում։ Մեծ տարածում են գտնում Դ. Ղազարյանի մասսայական-կենցաղային

1 «Կուլտուրական ֆրոնտ», 1934 թ. 18/11, Ս. Գասպարյան, «Դանիել Ղազարյան»։

երգերը իրենց ջերմ մելոդիականությամբ, անմիջականությամբ և դյուրըմբռնելիությամբ։ «Կոլխոզի աղջիկ» (խոսք՝ Մ. Կորյունի), «Գյուրջի աղջիկ» (խոսք՝ Գ. Սարյանի), «Կոմսոմոլ տղա» (խոսք Սարմենի), «Սոնա ջան» (խոսք Վ. Աղասյանի), «Մեր տրակտորը» (խոսք Վ. Աղասյանի) դառնում են ամենատարածված և սիրված երգերը և հնչում ամենուր։ Դ. Ղազարյանի երգերից մի քանիսը լույս են տեսնում «Երաժշտությունը մասսաներին» հրատարակությամբ ու «Նոր կենցաղի երգեր» ժողովածուում, ինչպես նաև տարբեր մասսայական երգարաններում։

Անվանի կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանը տարբեր առիթներով ունեցած իր ելույթներում միշտ էլ բարձր գնահատական է տվել Դ. Ղազարյանի երգային ստեղծագործություններին, նշելով նրանց յուրահատուկ մեղեդիականությունը, ջերմությունը, հուզականությունը, մասսայականությունը և միշտ ամեն առիթով օգտագործել այն և հրատարակել իր կողմից կազմված ժողովածուներում ու երգարաններում։

Դ. Ղազարյանը իր ստեղծագործական գործունեության շրջանում, մեծ թվով մանկական, դպրոցական երգերից, մանկական օպերաներից, երաժշտական պատկերներից բացի, գրել է ռոմանսների և երգերի շարք, որոնք հագեցված են ժողովրդական, գուսանական և քաղաքատիպ երգերին բնորոշ տարրերով, բայց և յուրահատուկ իր ստեղծագործությանը. դրանք ժամանակին

մեծ ճանաչում էին գտել և երգվում էին ամենուր[1]։

Դանիել Ղազարյանի ստեղծագործական ժառանգության մեջ մեծ թիվ են կազմում նրա մասսայական-կենցաղային երգերի շարքը, գրված սովետական կարգերի հաստատումից հետո, Հայրենական պատերազմի շրջանում գրված երգերը, ժողովրդական, գուսանական երգերի մշակումները, խմբերգերը, «Հովն անուշ», «Ծառիս տակը կանաչ է», «Հորովել», «Ուռենուն», «Յար ջան» և այլ գործեր, որոնց թիվը հասնում է մոտ չորս հարյուրի։

Այսօր էլ ծանոթանալով դպրոցական երգ-երաժշտության դասավանդման ծրագրերին, հետևելով համերգային, ռադիոյի և հեռուստատեսության ծրագրերին, տեսնում ենք, որ Դ. Ղազարյանի ստեղծագործություններն իրենց արժանի տեղն են գրավում և ավելի մեծ թվով ունկնդիրներ ընդգրկում։

* * *

Գեղարվեստական ինքնագործունեությունը և մասնավորապես երգչախմբային ինքնագործունեությունը Հայաստանում լայն ծավալ է ստանում սովետական կարգերի հաստատումից հետո։

---

1 Դ. Ղազարյանի երգերի լավագույն կատարողները եղել են Տիգրան Նալբանդյանը, Շարա Տալյանը («Լանջեր մարջան» երգի առաջին կատարողը, որին և նվիրված է երգը), Արմենակ Տեր-Աբրահամյանը («Քուլր իմ նազելի» երգի առաջին կատարողը), Շողիկ Մկրտչյանը։

Երգեցիկ խմբերի կազմակերպման փորձեր են արվում դպրոցներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում։

Նորից հրապարակի վրա մենք տեսնում ենք Ռ. Մելիքյանին, Սպ. Մելիքյանին, Ստեփան Դեմուրյանին, որոնք այդ գործի պիոներներն էին, ապա Կ. Զաքարյանին, Թ. Ալթունյանին, Ա. Մանուկյանին, Միք. Միրզոյանին և ուրիշների։

Պարզ է, որ այդ գործին չէր կարող իր մասնակցությունը չունենալ նաև Դանիել Ղազարյանը։

Երևան տեղափոխվելուց հետո կոմպոզիտորմանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ Միքայել Միրզոյանը մեծ աշխատանք ծավալեց (1927—1929 թթ.) Երևանում դպրոցականների դեղագիտական դաստիարակության ուղղությամբ, կազմակերպելով սիստեմատիկ համերգներ, մանկական օպերաների և երաժշտական պատկերների բեմադրություններ, որոնք մեծ մասսայականություն էին վայելում։

Կիրակնօրյա այդ ներկայացումներին Միք. Միրզոյանը ցուցադրել է Ա. Մանուկյանի «Զարի վերջը», Դ. Ղազարյանի «Հաղթված բազեն», Ս. Մուրադյանի «Շունն ու կատուն» Վ. Ումր-Շատի «Ուլիկը», Ա. Մայիլյանի «Զար Մխկիչը», իր ստեղծագործություններից «Ծիտն ու սագը», «Ճպուռն ու մրջյունը» և այլն։

Սկսած գեղեցիկ գործը դժվար էր շարունակել նյութական անհրաժեշտ միջոցների բացակայության հետևանքով։

երկսունական թվականների սկզբներին Մ. Միրզոյանը և Դ. Ղազարյանը նորից Երևանի Գավգործկոմի պատաջ հարց են բարձրացնում Մանկական երաժշտական թատրոնի կազմակերպման հարմար։ Ջնայած սիրով ընդունվում է այդ առաջարկը և կազմակերպվում է հեղինակավոր հանձնաժողով այդ աշխատանքը գլխավորելու համար, բայց նախաձեռնությունը մնում է անհետևանք։

Դանիել Ղազարյանը սկսում է այդ գործը պիոներների պալատում, կազմակերպելով աշակերտական բազմամարդ երգեցիկ խումբ, համերգներ, ներկայացումներ, հաջողությամբ մասնակցում պրոցցակական սուդգատեսներին և օլիմպիադաներին։

Դ. Ղազարյանի շնորհակալ աշխատանքներից մեկն էլ կույրերի քառաձայն երգեցիկ խմբի և նվագախմբի կազմակերպումն էր։ Այդ կոլեկտիվներով էլ նա համերգներ էր ունենում քաղաքում, շրջաններում, սուդգատեսներում և օլիմպիադաներում։ Ամենուրեք նրա աշխատանքը արժանանում է մեծ ընդունելության և մամուլի բարձր գնահատականին։ Տասը տարուց ավելի, սկսած Լենինականից, ապա Երևանում, Դ. Ղազարյանը մեծ աշխատանք կատարեց կույր դպրոցականների և մեծահասակների երաժշտական դաստիարակության ուղղությամբ։ Երգչախմբային ինքնագործ արվեստի զարգացման գործում Դանիել Ղազարյանի բեղմնավոր աշխատանքի արդյունքներից

մեկն էլ Երևանի ուսուցիչների տան երգեցիկ խմբի կազմակերպման նախաձեռնությունն էր։

Երևանի ուսուցիչների տան քառաձայն երգչախումբը կազմակերպվել և իր սիստեմատիկ աշխատանքները սկսել է քառասունական թվականների սկզբներից՝ Դանիել Ղազարյանի ղեկավարությամբ։ Իր առաջին իսկ ելույթներով ուսուցչական երգեցիկ խումբը աչքի է ընկնում իր կազմակերպվածությամբ, հետաքրքիր ծրագրով և կատարողական արվեստով, մասնակցում հանրապետության բոլոր միջոցառումներին և ստուգատեսներին։ Ահա թե ինչու 1945 թ. Մոսկվայում կայանալիք ինքնագործ երգչախմբերի Համամիութենական օլիմպիադայում մասնակցելու համար առաջադրվում է ուսուցիչների տան երգչախումբը, որը նախորդ բոլոր ստուգատեսներին ճանաչվել էր լավագույնը։

Երգեցիկ խմբի ղեկավար է հրավիրվում նաև կոմպոզիտոր Մարտին Մազմանյանը։ Համամիութենական ստուգատեսին մասնակցելու համար լրացվում է խմբի կազմը, պատրաստվում հետաքրքիր ծրագիր[1]։

Երևանի պետական կոնսերվատորիայի երգե-

---

1 Կոմիտաս՝ «Գարուն ա», «Կալի երգը», «Քաղհանն», «Սիփանա քաջեր», Կարա-Մուրզա՝ «Ալագյազ» և «Քեզի մեռնիմ», Սպ. Մելիքյան՝ «Պիլիբին», Ա. Տեր-Ղևոնդյան՝ «Կողբա-յալլի», Դ. Ղազարյան՝ «Հովն անուշ», «Ուռենին», Մ. Մազմանյան՝ «Կարմիր վարդ» և «Ջաղցի դոնով», Կ. Զաքարյան՝ «Մատնուա ակը», Ա. Քոչարյան՝ «Նախշուն աքիրը» և այլն։

ցիկ խմբի Մոսկվայում տարբեր առիթներով (փառատոներ, ստուգատեսներ) ունեցած երեք ելույթներից հետո ուսուցչի տան երգեցիկ խումբը առաջին ինքնագործ երգչախումբն էր, որ հանդես էր գալիս Միության մայրաքաղաքում՝ ցուցադրելով հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները։

Ուսուցչական երգեցիկ խմբի ելույթները տեղի են ունենում Մոսկվայի կոնսերվատորիայի մեծ դահլիճում, Միությունների տան սյունազարդ դահլիճում, Մեծ թատրոնում, ակումբներում և գործարաններում։ Պետական կոնսերվատորիայի մեծ դահլիճում երգեցիկ խմբի առաջին հաջողությունը գոտեպնդում է ողջ երգչախմբին և ապահովում նրանց հետագա հաջողությունը։ Երգեցիկ խմբի բազմաթիվ ելույթների ժամանակ, ունկնդիրների պահանջով, մի շարք համարներ կրկնվում են[1]։

Մոսկվայի թերթերը մեծ գովասանքով են խոսում երգեցիկ խմբի կատարողական արվեստի, նրա բարձր տեխնիկայի, ինտոնացիոն մաքրության, հնչողականության և նրբության մասին։

«Մեր ժողովրդի արվեստը» հոդվածում ժյուրիի նախագահ Ա. Վ. Սվեշնիկովը գրում է. «Սովետական Հայաստանի ինքնագործունեությունը այս

---

1 Երևանի պետական կոնսերվատորիայի երգեցիկ խումբը ելույթներ է ունեցել Մոսկվայում՝ 1927 թ. կոմպոզիտոր Սպ. Մելիքյանի, 1930 թ. Կ. Զաքարյանի, իսկ 1936 թ.՝ խմբավար Թաթուլ Ալթունյանի ղեկավարությամբ։

ստուգատեսում ներկայացված է Երևանի ուսուցչական երգեցիկ խմբով (ղեկավարներ Մ. Մազմանյան և Դ. Ղազարյան)։ Երգեցիկ խմբի ելույթը շատ լավ տպավորություն թողեց։ Դա կուլտուրական կոլեկտիվ է, պրոֆեսիոնալ ապահովման կատարողական հնարավորություններով օժտված»։

Գ. Պոլյանսկին «Ժողովրդական երգչախմբեր» հոդվածում գրում է. «Մեծ հաճույք պատճառեցին ազգային հանրապետությունների երգչախմբերը։ Երևանի հայ ուսուցիչների երգեցիկ խմբի երաժշտականությունը, զուսպ գծերը («Կալի երգը») նույնքան գրավեց ունկնդրին, ինչպես և Քութաիսիի վրաց բանվորների տեմպերամենտը»։

Ն. Դեմյանովը «Ժողովրդական արվեստի տոնը» հոդվածում գրում է. «Գեղեցիկ և մեծ արտահայտչականությամբ ու նուրբ նյուանսիրովկայով կատարեց Կոմիտասի «Կալի երգը» հայ ուսուցիչների կապելլան»։

«Չորրորդ օրը» հոդվածում Բ. Լյուբիմովը գրում է. «Առաջին հերթին արժանի է նշել Հայաստանի դպրոցական աշխատողների կապելլան։ Երևանի ուսուցիչները իրենց գեղարվեստական ղեկավարներ Մ. Մազմանյանի և Դ. Ղազարյանի օգնությամբ երգի լավագույն նմուշների բազմազան կատարմամբ կարողացել են հասնել լավագույն արդյունքների։ Առանձին փայլով էր հնչում Կոմիտասի «Կալի երգը», կարելի է ասել, որ դա ստուգատեսի չորս եզրափակիչ համերգների ծրագրի ամենահաջող համարներից մեկն էր։ Հայ

ուսուցիչների մոտ նկատվում է լավ շփոթա, համառ աշխատանք յուրաքանչյուր ֆրազի վրա»։

Մոսկվայում ունեցած հաջողություններից հետո երգեցիկ խումբը համերգներով հանդես է գալիս Երևանում և Հայաստանի տարբեր շրջաններում՝ պահպանելով ծրագրում տեղ գտած երգերի բարձրորակ կատարումը։ Առանձնապես պետք է նշել երգեցիկ խմբի ելույթը Հայաստանում սովետական կարգերի հաստատման 25-րդ տարեդարձի օրերին Երևանում բացված երգեցիկ խմբերի և երգի-պարի անսամբլների հանրապետական ստուգատեսում։ Ժյուրին, նախագահությամբ կոմպոզիտոր Անուշավան Տեր-Ղևոնդյանի, նշում է Երևանի ուսուցչի տան երգչախմբի կատարողական վարպետությունը։

50—ական թվականների սկզբներից Դ. Ղազարյանը, ապա Մ. Մազմանյանը, ծանրաբեռնված լինելով իրենց հիմնական աշխատանքով՝ հրաժարվում են երգչախմբի աշխատանքներից։

Որոշ ընդհատումներով, տարբեր խմբավարների ղեկավարությամբ, մեծ տրադիցիա ունեցող երգեցիկ խումբը մինչև այսօր էլ շարունակում է իր գործունեությունը, դասվելով հանրապետության ինքնագործ լավագույն երգեցիկ խմբերի շարքը։ Որոշ ժամանակից հետո Դ. Ղազարյանը իր քրոջ՝ Աշխենի, հետ մեկնում է իր ծննդավայրը՝ Շուշի։ Երկար ընդմիջումից հետո նա վերադառնում է Շուշի արդեն որպես անվանի կոմպոզիտոր։ Նրա երգերը, ռոմանսները, մանկական

երգերը մեծ տարածում են գտել նաև ծննդավայրում։

Դ. Ղազարյանը ներկա է լինում Ստեփանակերտի պետական թատրոնի «Սոս և Վարդիթեր» ներկայացմանը։ Թատրոնի գլխավոր ռեժիսոր Կարո Ալվարյանը մի քանի խոսքով ծանոթացնում է Դ. Ղազարյանին։ Դերասանական կոլեկտիվը և հանդիսատեսը ջերմ ընդունելություն են ցույց տալիս Դ. Ղազարյանին, որպես հայրենակցի և «Սոս և Վարդիթեր»-ի երաժշտության հեղինակի։

Դ. Ղազարյանը սիրով լսում է դպրոցական երգչախմբերի ելույթները, ծրագրային և մեթոդական օժանդակություն ցույց տալիս խմբի ղեկավարներին։ Պատրաստվում է Սովետական Ղարաբաղի 25-ամյակին նվիրված տոնական համերգին, գրում նոր երգ՝ «Ինչ սիրուն է Ղարաբաղը»։

Դ. Ղազարյանը մեծ տպավորություններով է վերադառնում Ղարաբաղից, որով և ավարտվում է նրա երկրորդ այցելությունը իր ծննդավայրը։

* * *

Դ. Ղազարյանը հայ երաժշտական մշակույթի պատմության մեջ իր արժանի տեղն է գրավում որպես երգային ժանրի լավագույն և բեղմնավոր ստեղծագործողներից մեկը։

Մանկական երգերին դուգընթաց, որոնք ժամանակին խոշոր դեր կատարեցին դպրոցականների երաժշտական դաստիարակության, մանկական

երաժշտական դրականության հարստացման գործում, Դ. Ղազարյանը ստեղծագործում է կենցաղային երգ-ռոմանսների շարքը, որին արդեն ձեռնամուխ էին եղել իր ավագ ընկերները՝ Ա. Մայիլյանը, Ե. Բաղդասարյանը, Ստ. Դեմուրյանը և ուրիշներ։ Ապա նրա մանկական երաժշտական պատկերները, օպերաները, երաժշտական դրամաները, որոնք դաստիարակել են սերունդներ և սիրվել նրանց կողմից։

Դ. Ղազարյանի երգերը աչքի են ընկնում քնարական շնչով, ջերմ զգացմունքայնությամբ, ժողովրդական հարուստ ինտոնացիաների օգտագործմամբ, վառ մեղեդայնությամբ, սահուն ձայնախաղերով, երաժշտական ընկալման մատչելիությամբ և իրեն հատուկ ոճով։ Ահա այն հիմնական հատկությունները, որոնք նրա երգերին բերել են մասսայականություն։

Ինչպես կարող է մոռացվել նրա մանկական երգերից՝ «Սիրուն թիթեռը», «Սագիկ-մագիկը», «Փիսիկի գանգատը» քնարական երգ-ռոմանսներից՝ «Ուռենի»[1], «Քույր իմ նազելի», «Վանջեր մարջան», «Մի սիրտ ունեմ», նոր կյանքի ու կենցաղի երգերից՝ «Կոմսոմոլ տղա», «Դյուրջի աղջիկ», «Կոլխոզի աղջիկ», «Սովետական գարուն», «Տրակտորիստի երգը» և շատ ու շատ այլ երգեր, որոնք կատարվել են համերգներին, ռադիոյով և մեծ մասսայականություն վայելել ժողովրդի կողմից։

1 Դ. Ղազարյանի հայտարարության համաձայն Ավ. Իսահակյանը հավանել է այն և հուշել երգի երկրորդ տունը։

Դ. Ղազարյանի երգերը կատարվում են ոչ միայն մեզ մոտ, այլև Սովետական Միության հայաշատ վայրերում։

Անհնար է թվել բոլոր այն վայրերը, որտեղ պարզ ու գրավիչ, համեստ բնավորության տեր արվեստի այդ անխոնջ մշակը իր ազնիվ հայրենանվեր աշխատանքով բարի հիշատակ է թողել իր աշակերտների, ընկերների, ունկնդիրների մոտ։

Ճիշտ գնահատական է տալիս երաժշտագետ Ա. Շահվերդյանը, Դ. Ղազարյանին դասելով «ժողովրդական լուսավորության ասպարեզի ակտիվ աշխատողների, իրենց ստեղծագործության և հասարակական գործունեության մեջ Կարա-Մուրզայի փորձն ու մեթոդները զարգացնող երաժիշտների խմբին»։

Դ. Ղազարյանի գործունեության մասին իրենց խոսքն են ասել ինչպես միութենական, հանրապետական, այնպես էլ շրջանային թերթերն ու ամսագրերը։

Կուսակցությունն ու կառավարությունը բարձր են գնահատել Դանիել Ղազարյանի երկարամյա բեղմնավոր գործունեությունը, որպես ստեղծագործողի, մանկավարժի, խմբավարի և երաժշտական-հասարակական գործչի։

—Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո,— գրում է Դ. Ղազարյանը,—իմ 30 տարվա մանկավարժական աշխատանքի համար մեր կառավարությունը ինձ շնորհեց վաստակավոր ուսուցչի և արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կո-

չում, իսկ այսօր ամենաբարձր պարգև՝ Լենինի շքանշան։

Մեծ պարգևն ստանալուց հետո ես խոսք եմ տալիս ավելի մեծ եռանդով աշխատել և նորանոր հաջողություններ ձեռք բերել մանուկների դաստիարակության պատվավոր գործում»[1]։

Դ. Ղազարյանը կատարեց իր խոստումը՝ նա մինչև իր կյանքի վերջը (1958 թ. դեկտեմբերի 14) մնաց մանուկների և դպրոցականների լավագույն բարեկամը, երաժշտական բնագավառի ակտիվ գործիչներից մեկը, որպես ստեղծագործող, խմբավար, հավատարիմ մնալով և շարունակելով իր մեծ ուսուցիչների ավանդները։

---

1 «Սովետական Հայաստան», 1/2-49 թ., № 25։

Ց Ա Ն Կ

ԴԱՆԻԵԼ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ* ՄԱՆԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Մուղրուղու	*խոսք. Հովհ. Թումանյանի*
Շնիկ	» — » — » — »
Շունը	» — » — » — »
Փխիկի գանգատը	» — » — » — »
Փխոն-փխոն	» — » — » — »
Հովիկը	» — » — » — »
Վարդը	» — » — » — »
Լուանյակն եկավ	» — » — ։ — »
Ձուկն է լողում	» — » — ՝ — »
Անուշ հովեր	*Աբ. Խնկոյանի*
Դաշտի շողիկ	» — » — » — ։
Աշուն	» — ՝ — » — »
Ձմեռ պապի	» — » — ՝ — ՝
Ձմեռ	» — » — » — »
Սիծեռնակին	» — » — » — »
Կաչաղակ	» — » — » — »
Փչում է քամին	» — » — » — »
Ձորս եղանակ	» — » — » — »
Ձմռան երգ	» — » — » — »

* *Հիմք է ընդունված Դ. Ղազարյանի կազմած ցանկը։*

Եղևնի	»—»—»—»
Անտերև ծառը	»—»—»—»
Պիոներներ	»—»—»—»
Պիոներական	»—»—»—»
Հոկտեմբերիկին	»—»—»—»
Սագիկ-մագիկ	Ղ. Աղայանի
Սիրուն թիթեռ	»—»—»—»
Նոր տարի	»—»—»—»
Վեր կաց, մանուկ	»—»—»—»
Սարի լանջին	»—»—»—»
Եկեք երեխեք	»—»—»—»
Այսօր ուրախ ենք	»—»—»—»
Աշնան վերջը	»—»—»—»
Ծուլլ աղչիկը	»—»—»—»
Վառ գարուն	»—»—»—»
Ահ սիրուն սագիկ	»—»—»—»
Պատիկ ծիտ եմ	Հակ. Աղաբաբի
Մեր Թոփլանը	»—»—»—»
Միտիկները հյուր են եկոլ	»—»—»—»
Տափ կանի	»—»—»—»
Էծիկ	»—»—»—»
Ձա դանդանի	»—»—»—»
Միտիկի սերը	»—»—»—»
Ցմբա	»—»—»—»
Ծուղրուղու	»—»—»—»
Հնչում է զանգը	»—»—»—»
Քնիր, բալա	»—»—»—»
Պապար	»—»—»—»
Իլիկը	»—»—»—»
Կարմիր արև	»—»—»—»
Լուսինն ելավ	»—»—»—»
Ահ կաչաղակ	»—»—»—»
Ջան, ջան, աշուն է	»—»—»—»
Գարունն եկավ	Հ. Հայրապետյանի

Արշալույսը	» — » — » — »
Սիրուն գարուն	» — » — » — »
Ձմեռ	» — » — » — »
Մայիսին	» — » — » — »
Գարնանացան	» — » — » — »
Հոկտեմբերիկին	» — » — » — »
Աշուն է	» — » — » — »
Աշնան վերջին	» — » — » — »
Վառ գարուն	» — » — » — »
Աշուն	» — » — » — »
Ճամփա տվեք	» — » — » — »
Հոկտեմբեր	» — » — » — »
Գարուն է, սիրուն է	» — » — » — »
Բարև, ձմեռ	» — » — » — »
Գարուն	» — » — » — »
Պիոներական երգ	» — » — » — »
Հոկտեմբերիկ	վ. վարդանյանի
Դարբիններ	Գ. Մահարու
Սիծեռնակի գալուստը	Հ. Հովհաննիսյանի
Կոմսոմոլը	Մ. Մաուռյանի
Մայիսմեկյան առավոտ	Մկրտիչ Արմենի
Զորագէսը	Ա. Աբելյանի
Լենինի թռունիկները	Ա. Մկրտչյանի
Վարդը	Ա. Աբելյանի
Թրթուռը	Ս. Գալիկյանի
Դպրոցական	Գ. Գրիգորյանի
Տոնածառ	Սարմենի
Մանուկն ու ձյունը	Ե. Լոռեցի
Դավթի հրաժեշտը	Գ. Սարյանի
Մեր քաջ Դավթին	Ս. Տարոնցու
Դավթի գովքը	» — » — » — »
Դպրոցականի երգը	» — » — » — »
Հաղթական քայլերգ	» — » — » — »
Բանակին ղուրբան	Սարմենի
	Գ. Ղուրբանյանի

Անուշ դարուն	Գ. Գրիգորյանի
Երեանը սարը	Հ. Կոստանյանի
Սիրենք երգեր	Աղավնու
Կանչիր կոունկ	Մ. Կուրյունի
Առվակի երգը	Ռ. Կասպյանի
Արի, արի, ջան աշուն	»—»—»—»
Աշուն նկար	»—»—»—»
*Ճուտիկները**	»—»—»—»

Երգեր-ռոմանսներ

Քուլր իմ նազելի	Խոսք՝ Ավ. Իսահակյանի
Սար դարձիր	»—»—»—»
Լանջեր-մարջան	Վ. Աղասյանի
Անուշ գարուն	Գ. Գրիգորյանի
Արծվի սերը	Շ. Կուրղինյանի
Ես երգեցի	Մ. Աբմենի
Ջուլդ աչեր	Կ. Զարխչյանի
Մենակ համփորդ եմ	Ա. Մատուրյանի
Չկան ինձ համար	Վ. Տեյրանի
Աշնան դիշեր	Լ. Վարդումու
Լոուիյուն	Վ. Տեյրանի
Միշտ գարուն	Ա. Տիգրանյանի
Թառամած համբույր	Հ. Հակոբյանի
Սոսինների տակ	Հ. Խանդարյանի
Շեկ աղջիկ	Պ. Մոնոռյանի
Ինչ լավ է	Ա. Անդրաեիկյանի
Մայիսը սիրուն	Ա. Նենկոյանի
Զնոով Օհանի երգը	Ս. Տարոնցու
Աշնան վերջը	Հ. Հայրապետյանի
Իմ կյանքը քարուտ ճամփա	Գ. Սարյանի
Խոսք ես տալիս չես պահիս	Մ. Դարբինյանի

* *Մանկական դպրոցական երգերի մեծ մասը տպագրված են առանձին տետրերով, դպրոցական և մանկական երգերի տարբեր ժողովածուներում, երաժշտական դասագրքերում և մանկական ամսագրերում։*

	Ժողովրդական
Հովերգ (մշակում)	»—»—»—»
Բիլիբան (մշակում)	»—»—»—»
Անմուրազ յար (մշակում)	»—»—»—»
Գյուլիզար (մշակում)	»—»—»—»
Ջոբան չոբան (մշակում)	»—»—»—»
Ջուլո (մշակում)	»—»—»—»
Ջիս սասամ (մշակում)	Սայաթ-Նովայի
Ալբդ խոմար (մշակում)	Շերամի
Մի բալա է (մշակում)	»—»—»—»

Մասսայական-կենցաղային երգեր

Լենին	Խոսք՝ Ն. Զարյանի
Կոմսոմոլ տղա	Սարմենի
Կոմունիստի երգը	Հ. Հակոբյանի
Կոլխոզնիկ յար	Գ. Սարյանի
Գյուրջի աղջիկ	»—»—»—»
Դազգյահի աղջիկ	»—»—»—»
Բանակ եմ գնում	»—»—»—»
Սոնա ջան	Աղավնու
Գարուն ելանք	»—»—»—»
Մեր տրակտորը	Վ. Աղասյանի
Արևն ելավ	»—»—»—»
Մարոն ու Սարոն	Ա. Վշտունու
Արևելք	»—»—»—»
Կոլխոզի աղջիկ	Մ. Կոբյուճի
Հերոսական	Ս. Վանունու
Հանքափոր ընկեր	»—»—»—»
Տրակտորը երգ է ասում	»—»—»—»
Շտուրմ մարշ	»—»—»—»
Կոմերիա ես, նոր ես	Ա. Անդրանիկյանի
Սովետական գարուն	Վ. Բզնունու
Աշուն չը կա	Վ. Տերունու
Ջան սարի աղջիկ	Շ. Կարապետյանի

Մարտի ութը	Մ. Սարգսյանի
Կանանց օրը	» — » — » — »
Կանանց տոնը	» — » — » — »
Կարմիր բանակին	» — » — » — »
Նոյեմբերի գովքը	Ա. Ղարիբյանի
Գարնանացան	Հ. Մելիումյանի
Ժիր աղջիկ	Հ. Հայրապետյանի
Գյուղը մեր նոր	Վ. Թարիկյանի
Հնձվորի երգը	Գ. Ղազարյանի
Տրակտոր ջան	Մ. Կոչյունի
Առնիմ կուժը	» — » — » — »
Յար ջան, արի	Հ. Մելիումյանի
Հրաժեշտի երգ	Սարմենի
Ուրախություն	» — » — » — »
Կարմիր բանակին	» — » — » — »
Հայրենիքիս աղջույն	Մ. Թայիրյանի
Գովք կարմիր բանակին	Հ. Մելիումյանի
Սովետական Հայաստան	» — » — » — »
Հաղթանակի երգ	Օ. Հովհաննիսյանի
Երգ Հայաստանի	» — » — » — »
Անուշ Հայաստան	» — » — » — »

Խմբական երգեր

Խոսք՝ Ն. Զարյանի

Լենին	Ժողովրդական
Հովն անուշ (մշակում)	» — » — » — »
Սարի գյալին (մշակում)	» — » — » — »
Ես սարեն կուգայի (մշակում)	» — » — » — »
Ծառիս տակը կանաչ է (մշակում)	» — » — » — »
Սիրուն կաքավ (մշակում)	» — » — » — »
Դու խոսք տվիր (մշակում)	» — » — » — »
Դիլբար ջան (մշակում)	» — » — » — »
Հորովիլ (մշակում)	» — » — » — »
Մանան (մշակում)	» — » — » — »
Արևիդ մեռնիմ (մշակում)	» — » — » — »
Աղջի եվա (մշակում)	» — » — » — »

Ջիլ գարիկնիք	խոսք՝ Գ. Աբեղեանի
Սրեւ գիպաւ	Հ. Հովհաննիսյանի
Լորիկ յարս	»—»—»—»
Գարունի երգը	Հ. Հակոբյանի
Առաջ ընկնիր	Լ. Վարդումու
Ոտանոտն	Վ. Տերյանի
Երիտանք սարը	Կ. Կոստանյանի
Ալագյալ բարձր սարին	Հ. Հովհաննիսյանի
Գամիի գովքը	Ս. Տարոնցու
Անջիգյար յար (մշակում)	Շերամի
Յար ջան (մշակում)	»—»—»—»

Նվագախմբերի համար գրված ստեղծագործություններ

Էսքիզներ (սիմֆ. նվագ.) —— —— ——	*1926 թ.*
Արևելյան սերենադ (»—»—»—») ——	*1925 թ.*
Գյուղական պար (»—»—»—») —— ——	*1926 թ.*
Հոկտեմբեր (փոգ. նվագ.) —— —— ——	*1934 թ.*
Սովետական Հայաստան (»—»—»—») ——	*1942 թ.*
Արևելյան քայլերգ (ժող. գործ. անս.) ——	*1927 թ.*

Դաշնամուրային ստեղծագործություններ

Նախերգանք	*Պար. № 3*
Հովվերգ	*Պար. № 4*
Պար. № 1	*Էսքիզներ*
Պար. № 2	

Մանկական օպերաներ

«Հաղթված բազե»	*1916*	ըստ Հ. Աղաբաբի
«Փոքրիկ կառուցողներ»	*1953*	ըստ Հովհ. Թումանյանի
«Գայլը»	*1930*	ըստ Վ. Վարդանյանի

«Դիքոյը»-ըստ Հովհ. Թումանյանի —— —— 1933 թ.
«Սոս և Վարդիներ»-ը ըստ Պերճ Պռոշյանի —— 1916 թ.
«Խալվարի որսը»-ըստ Վ. Միրաքյանի —— —— 1954 թ.

Դպիրյել Ղազարյանի կազմակերպած նամերգները, մանկական օպերային ներկայացումները

Երևան
Լենինական
Կիրովական
Նոր-Բայազետ (Կամոյի շրջ.)
Փաշաքյանդ
Էջմիածին
Հոկտեմբերյան
Դիլիջան
Ջաջուռ
Դյուզքանդ

Համերգների ընթացքում կատարվել են Կարա-Մուրզայի, Մ. Եկմալյանի, Կոմիտասի, Գ. Սյունիի, Ե. Բաղդասարյանի, Ա. Տիգրանյանի, Սպ. Մելիքյանի, Ռ. Մելիքյանի, Ստ. Դեմուրյանի, Ա. Մանուկյանի, Ա. Մայիլյանի, Մ. Մուրադյանի, Վ. Ումր-Շաթի, Միք. Միրզոյանի, Կ. Զաքարյանի, Ա. Քոչարյանի, Դ. Ղազարյանի, Ե. Սարդարյանի և ուրիշների ստեղծագործություններ։

Ղարս

Համերգների ծրագրերում տեղ են գտել նաև եղբայրական ժողովուրդների երգեր, հատկապես ռուսական և ուկրաինական։

Մոսկվա
Լենինգրադ
Բրիլիսի
Բաքու
Խարիով

Մանկական օպերաներից և երաժշտական պատկերներից բեմադրվել են՝ Ա. Մանուկյան՝ «Ջարի վիրջը», Դ. Ղազարյան՝ «Հաղթված բազեն», «Գայլը», «Անգործ մանուկը»։

Ռոստով

Ս. Մուրադյան՝ «Շունն ու կատուն»։

Մյասնիկյան (Ռոստ. շրջ.)
Նոր Նախիջևան
Արմավիր

Վ. Ումր-Շատ՝ «Ուլիկը», Ա. Մայիլյան՝ «Ջար Միկիչը», Մ. Մրզոյան՝ «Միտն ու լալը» և ուրիշներ։

Կրասնոդար
Վլադիկավկազ
Նովոռոսիյսկ
Բաթումի
Բորժոմ
Սուխումի
Սոչի
Սուրամի
Ախալցխա

Ախալքալաք
Աշխաբադ
Գանձակ (Կիրովաբադ)
Շուշի
Ստեփանակերտ
Կաղզվան
Նուխի
Ղզլարվանդ

Դանիել Ղազարյանի գործունեության մասին հոդվածներ են լույս տեսել հետևյալ հայ պարբերականներում

«Հորիզոն»
«Մշակ»
«Սուրհանդակ»
«Ընկեր»
«Աղբյուր տարազ»
«Գեղարվեստ»
«Խորհրդ. Հայաստան»
«Սովետական Հայաստան»
«Կոմունիստ»
«Շիրակի ռանչպար»
«Մարտակոչ»
«Բանվոր»
«Արվեստ»
«Մուրճ մանգաղ»
«Պրոլետար»
«Խորհրդային արվեստ»
«Պիոներ կանչ»

«Կուլտուրական ֆրոնտ»
«Ավանգարդ»
«Կարմիր ծիլեր»
«Բայազետի կոլխոզնիկ»
«Սովետական դպրոց»
«Труд»
«Учительская газета»
«Вечерняя Москва»
«Правда»
«Советский Карабах»
«Батумский коммунист»
«Армения»
«Трудовой Батум»
«Жизнь искусства»
«Красное знамя»
«Красная газета»
«Красный луч»
«Новороссийск»

Արտակ Ասատուրի Տոնիկյան
Դանիել Ղազարյան

Խմբագիր՝ Ի. Ս. Բրուտյան
Գեղ. խմբագիր՝ Ռ. Վ. Մազմանյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Գ. Փիրուզյան
Վերստուգող սրբագրիչ՝ Է. Ն. Մելոյան

Артак Асатурович Тоникян
Даниел Казарян
(на армянском языке)
Издательство «Айастан»
Ереван, 1977

Հանձնված է շարվածքի 30/VI 1976 թ.։
Ստորագրված է տպագրության 10/III 1977 թ.։
Թուղթ տպագր. № 1, 70×90¹/₃₂, տպագր. մամ. 2,25=2,54 պայմ. մամ., հրատ. 2,1 մամ., +2 ներդիր։ Պատվեր 1858։ Տպաքանակ 500։ Գինը՝ 12 կոպ.։ ՎՖ 05042։
«Հայաստան» հրատարակչություն, Երևան 9, Տերյան— 91։

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Արտաշատի տպարան։

Арташатская типография, Госкомитета Совета Министров Армянской ССР по делам издательств, полиграфии и книжной торговли.